

ինչհու պիտի մենք մեր ապրանքը ձրիապէս մեր ձեռքից տանք հաքիմ բաշու կամ դահնապետի օգնականի զուարճութեան համար:

— Ալլահի ամեն մի արարածն էլ արեան գին ունի, պատասխանեց մուշտահիդը: Արիւն թափելը անպատիժ չի մնալ. քայց մեր սուրբ Մարգարէն (յաւիտենական օրհնութիւն նրան) պատուիրում է մեզ ներող և քաղցր լինել դէպի մեր նմանները: Այդ պատուէրը նա մասնաւորապէս տալիս է հեղինակաւոր մարդկանց, և այժմ, ո՞վ թագաւոր, սրանից աւելի լաւ առիթ չկայ կատարելու այդ պատուէրը: Թող Շահը ների այս տարարախտ յանցաւորին և նա աւելի մեծ վարձատրութեան կ'արժանանայ երկնքում սրան ներելու համար, քան ուռմաներ սպանելու, ֆուսններ կոտորելու և սուֆիներ քարկոծելու համար:

— Թող այդպէս լինի, ասաց Շահը: Յետոյ դառնալով ինձ՝ բարձրաձայն ասաց. «Մուրախաս (ազատ) ես». և իր ձեռքը դնելով մուշտահիդի ուսին՝ աւելացրեց. «Բայց յիշէր որ քո ազատման համար դու պարտական ես այս Ալլահի մարդի բարեխօսութեանը: Եթէ սա չբարեխօսէր, դու չէիր ազատուիլ, քեզ թոյլ չէր տրուիլ արևի լոյսը: Բօրօ (գնահ), աչքերդ բաց և այլևս չերևաս մեր առջև:

—
Դ. Խը.

Հաջի Բարան հասնում է Սպահան:—Նա ժամանակին հասնում է իր հայրենի օջաղը՝ փակելու իր մեռնող հօր աչքերը:

Հարկաւոր չէր որ ինձ երկու անգամ հրամայուէր գնալու ես իսկոյն ծլկուեցի Ղուամից ու այնտեղի կրօնաւորներէից և առանց մի անգամ ետ նայելու՝ քայլերս ուղղեցի դէպի Սպահան—իմ հայրենի օջաղը: Ես մի քանի ըրալ փող ունէի դրրապանումս. դրանով ես կարող էի ճանապարհին ուտելիք գնել և իջևանելուս համար վճարել. դէ, ամեն մի քարվանսարայում մի անկիւն կը գտնէի պառկելու հանգստանալու:

Թէպէտ դեռ երիտասարդ էի, ես սկսեցի զգուշ աշխարհից և գուցէ եթէ բաւական երկար ապրէի Ղուամում, այն էլ այն եղանակով որ ես էի ապրում, հաւանականաբար բնաւորութիւնս այնպէս կը փոխուէր, որ ես յօժարութեամբ ինձ կը նուիրէի Միրզա Արդիւլ Գազիմի դասախօսութիւններին և, իհարկէ, աշխարհային յարգ ու վարկ կը շահէի իմ լուսկեցութեամբ, խստակրօնութեամբ և մահմէդական կրթութեան հետեւելով: Ծաղկառադիւրը սակայն ուրիշ վիճակ էր տնօրինել:

ինձ համար: Կեանքի ասպարէզը բաց էր առջևս, և ինձ վիճակուած էր դեռ շատ արկածների հանդիպել, քանի որ մինչև այժմ գլխիս եկածները դեռ կէսն էր այն պատահարների որ ճակատագիրը տնօրինել էր ինձ համար: Ես զգացի որ արժանի էի եղել ցարդ կրածս դժբախտութիւններին նրա համար որ ես բոլորովին սոռակեցի էի ծնողներս:

«Ես մի չար որդի եմ եղել, մտածեցի ես. այն ժամանակ որ մարդ էի, հեղինակութիւն ունէի և փքւում, պարծենում էի իմ կարեւորութեամբ, այո՛, այն ժամանակ ես բոլորովին մոռացել էի Սպահանում ապրող խեղճ սափրիչին, և այժմ, աւանդ, միայն այժմ, երբ ձախորդութեան մէջ եմ, նոր յիշում եմ իմ էութեան հեղինակներին»:

Ես յիշեցի իմ ուսուցչի մի խօսքը, որ նա յաճախ կրկնում էր ինձ համար արարեբէն լեզուով: «Հին բարեկամին, ասում էր նա, չէ կարելի փողով գնել, թէկուզ մարդ Հաթիմի բոլոր գանձը իր տրամադրութեան տակ ունենայ: Յիշիր, ուրեմն, ով պատանի, որ քո առաջին՝ ուրեմն և ամենահին բարեկամները քո հայրն ու մայրն են»:

«Բայց ես դեռ ցոյց կը տամ ծնողներս որ իրանք մի որդի ունեն, մըմնջացի ես, և սիրտս լցուեց որդիական բուռն սիրոյ և կարեկցական զգացումների յորդութեամբ: Եթէ Ալլահը կամենայ որ ես տուն հասնեմ, այլևս նրանց առիթ չեմ տալ որ ինձ նախատեն, կշտամբեն, ինչպէս անում էին, երբ իրանց մօտ էի և չէի վերաբերում դէպի նրանց որդիական պատշաճ յարգանքներով, խոնարհութեամբ և հնազանդութեամբ:» Բայց մի լոիկ, մի մեղմ ձայն «բաւական ուշացել ես» շնչաց ականջիս, և ես յիշեցի այն կանխագուշակութիւնները որ միտքս արել էր Զինաբի կորստեան համար. յիշեցի նաև թէ ես ինչ առաքիւնական դիտումներով ու որոշումներով էի հեռացել Թէհրանից...

Ինչևէ, ես շարունակեցի ճանապարհս, մինչև մօտեցայ Սպահանին և հեռուից տեսայ Քոլա Ղազի կոչուած լեռան գագաթը, որ որոշում է Սպահանի դիրքը: Սիրտս սկսեց բարախել, և ամեն քայլափոխում մտածում էի թէ ինչ դրութեան մէջ պիտի գտնեմ ծնողներս: Մտածում էի թէ արդեօք իմ ծեր ուսուցիչը կենդանի՞ է. արդեօք դեռ ապրում է մեր հայրեան բախկալը, որից ես յաճախ քաղցրաւենիք էի դնում հօրիցս գողացած փողերով. արդեօք դեռ կենդանի՞ է իմ բարեկամ Ղափիչին (դճնապանը), որին ես այնքան վախեցրել էի, երբ թիւրքմէնների հետ յարձակուել էինք բարվանսրայի վրայ:

արդեօք նրա՝ ղափշու կեանքի դուռը դեռ բաց է, թէ՛ յաւիտեան փակուել է նրա դէմ:

Այս մտածութիւններով ես առաջ քայլեցի, մինչև երևացին մինարէթներ ծայրերը, որոնց տեսարանով ես այնքան յափշտակուեցի, որ խկոյն չոգելով՝ աղօթեցի, փառք և գոհութիւն մատուցանելով Ալլահին, իր Մարգարէին և Ալիին, որ մինչև այդտեղ ինձ պահել պահպանել էին: Ապա, իբրև յիշատակ, ես վերցրի մի քար և մի ուրիշի վրայ դնելով հետեւալ ուխտն արի.

«Ո՛վ Ալի, եթէ դու կը հաճես որ ես՝ ամենախոնարհ և ամենանուաստ ստրուկդ ողջութեամբ տուն հասնեմ, համեմելուն պէս մի ոչխար կը զոհեմ, փլաւ կը պատրաստեմ և կը հիւրասիրեմ իմ ազգականներին ու բարեկամներին»:

Բարախող սրտով ես անցայ քաղաքի շրջակայքից, և ամեն մի տեղ, ամեն մի կէտ վերանորոգուած էր յիշողութեանս մէջ: Հասնելով քաղաքը՝ անցայ կամարակապ, երկար բազարներով ու խառնիխուռն փողոցներով առանց ամենևին կորցնելու ճանապարհս, մինչև ինձ գտայ կանգնած հօրս խանութի դիմաց, որ գտնուում էր արքունական բարվանսարայի յանդիման: խանութի դուռը փակ էր, գործի ձայն-ձուռն չկար այնտեղ: Երկար կանգ առայ այնտեղ, որովհետև իրերի այս երեւոյթը—հօրս խանութի փակ լինելն ու գործի նշան չլինելը—չարագուշակ թուաց ինձ. սակայն ես քիչ հանգստացայ, երբ յիշեցի որ այդ երեկոն շաբաթի ջումա (գիշեր լոյս ուրբաթ) էր, և հայրս: հաւանականօրէն իր ծերութեան օրերում աւելի խըստութեա՛ր ու ճշդութեամբ հետևելով մեր օրէնքին՝ յանցանք էր համարել գործել օրուայ այդ ժամին, որ պէտք է սուրբ պահուի:

Ինչէն, քարվանսարան բաց էր և ներկայացնում էր նոյն տեսարանը, ինչ որ ես տեսել էի մանկութեան ժամանակ: Այնտեղ կային հակերի տեղեր, որոնց շուրջը կանգնած ու նստած էին ջորիներ, ուղտեր և նրանց քոյկները: Այնտեղ երևում էին խումբ-խումբ մարդիկ զանազան տարազներով. ոմանք նստած էին, ոմանք տաք-տաք զրոյց էին անում, ոմանք անհոգութեամբ այս ու այն կողմն էին նայում, և ոմանք էլ մտահոգութեամբ շտապ-շտապ ներս ու դուրս էին անում իրանց գործերը կարգադրելու համար: Ես նայեցի ամեն կողմ տեսնելու իմ մանկութեան հասակի բարեկամ ղափշուն (դռնապանին), սակայն չտեսնելով նրան՝ սկսեցի մտածել թէ՛ գուցէ նա էլ փակել էր իր դուռը, երբ յանկարծ նա երևաց: Ղայլանն իր ձեռքում՝ նա տամբըալով դնում էր սարքելու դրան:

Նրա գլուխը բաւականաչափ թաղուել էր ուսերի մէջ և աւելի էր կախուել դէպի կուրծքը: Նրա ծնկների ծոռածու-

թիւնը ցոյց էր տալիս, որ տարիները կանոնաւոր հաշիւ էին պահել նրա հետ:

«Նա ծեր Ալի Մոհամէդն է, մտածեցի ես, և առաջ գնացի դէպի նա: Հազար մարդկանց մէջ էլ որ նա լինի, ես լաւ կը ճանաչեմ նրան իր ծուռ քթից, որովհետեւ ես անքան անգամ խուզել եմ նրա բեղերն ու մօրուքը»:

Եւ ողջունեցի նրան սովորական խօսքերով, սակայն նա կ'ասես թէ չլսելով՝ շարունակեց զբաղուել իր դայլանով առանց մինչև անգամ վեր նայելու: Իր կեանքում նա անքան բազմաթիւ օտարականների հետ գործ էր ունեցել, որ սովորել էր առանց գլուխը բարձրացնելու թէ լսել և թէ պատասխանել նրանց:

— Դու չեմ ճանաչում ինձ, Ալի Մոհամէդ, հարցրի ես:

Նա բարձրացրեց իր գլուխը և երեսիս նայելով՝ ասաց.

— Բարեկամ. այս քարվանսրան ներկայացնում է մի աշխարհ. այնքան մարդիկ են մտնում ու դուրս գնում որ մարդ հաշիւ չէ կարող պահել. ուրեմն ես ինչպէս ճանաչեմ քեզ: Ալի Մոհամէդը, է, ծերացել է, այլևս նա յիշողութիւն չունի:

— Բայց դու անշուշտ կը յիշես Հալի Բաբային—այն փոքրիկ հաջուն, որը այստեղ եղած ժամանակ միշտ սափրում էր քեզ:

— Ալլահ իլ Ալլահ, բացազանչեց նա մեծ զարմանքով. իսկապէս դու ամբ հաջին ես: Ա՛, որդիս, տեղդ շատ դատարկ էր մնացել. ուրեմն դու վերջիվերջոյ եկել ես: Լնւ, փառք Ալլահին, որ ծերունի քէրբլէյ Հասանը վերջապէս արժանացաւ որ իր աչքերը փակուեն իր միակ որդու ձեռքով, ապա մեռնի:

— Ի՞նչ, ի՞նչպէս, հարցրի ես. ո՛ր է հայրս, ինչո՞ւ է նրա խանութը փակ, ինչո՞ւ ես մեռնելու մասին խօսում:

— Բնալի, հաջի, ծերունի սափրիչը մեռնելու վրայ է: Առանց մի բոլե կորցնելու շտապիւր տուն. թերեւ դու միջոց կ'ունենաս նրա մեռնելուց առաջ ստանալ նրա օրհնութիւնը: Եթէ Ալլահը կամենայ, ես էլ շուտով կը հետեւեմ նրան, որովհետեւ ամեն-ինչ ունայնութիւն է: Յիսուն տարի ես բացել և փակել եմ այս քարվանսրայի դուռը և այժմ տեսնում եմ որ ոչ մի բան ինձ հաճոյք չէ պատճառում: Բանալիներս փայլում են, սակայն ժանգն ուտում է ինձ, մաշում է մարմինս:

Եւ չսպասեցի որ դռնապանը վերջացնէր իր խօսքը, այլ իսկոյն շտապեցի դէպի հօրս տունը, որին մօտենալով՝ ես տեսայ երկու մոլլաներ, որոնք քաշ էին գալիս նեղ և ցած մուտքի առաջ: Հն, մտածեցի ես, չարագուշակ թողուններ էք դուք, ուր գործում է մահը, անստեղ էք դուք միշտ:

Առանց նրանց ողջունելու ես ներս մտայ և գնացի մեր հիւրասենեակը, ուր մի խումբ մարդիկ շրջապատել էին հօրս, որ պառկած էր յատակի վրայ գցած մահճում: Ո՛չոր չճանաչեց ինձ, և քանի որ մեր մէջ սովորութիւն է, որ մինչև անգամ մեռնողին բոլորովին անձանօթ մարդիկ ևս ազատ են ներս մտնելու առանց հրաւիրուելու, այդ պատճառով երբ ես ներս մտայ, ինձ չնկատեցին: Հիւանդի մի կողմը նստած էր մի բժիշկ, միւս կողմը գլխի մօտ չոքած էր մի ծերունկ: Վերջինս իմ ուսուցիչն էր. նա մխիթարում էր իր մեռնող բարեկամին: Նրա խօսքերը համարեա հետեւեալն էին.

— Մի տրտմիր, բարեկամ, փնփոք Ալլահին, դու դեռ շատ օրեր պիտի ապրես երկրիս վրայ. դեռ պիտի ապրես, մինչև որդուդ տեսնես: Հաջի Բարան շուտով կը գայ. բայց դու լաւ կ'անես որ կտակ անես և մէկին քեզ ժառանգ նշանակես: Եթէ կ'ուզես, կարող ես այստեղ ներկայ գտնուողներէ մէկն ու մէկին ժառանգ նշանակել քեզ:

— Ա՛խ, հառաչեց հայրս, հաջին մեզ բոլորովին մոռացել է, այլևս նա չի գալ, այլևս ես չեմ տեսնիլ նրան: Նա այժմ այնպիսի մի անձնաւորութիւն է դառել, որ երբէք էլ չի յիշիլ իր ծնողներին. ո՛չ, նա արժանի չէ, ես նրան ժառանգ չեմ նշանակելու:

Հօրս այս խօսքերը անմիջապէս ազդեցին ինձ, և ես այլևս չկարողացայ զսպիլ ինձ: Ինձ ճանաչեցնելու համար ես իսկոյն գոչեցի. «Հաջին այստեղ է, հաջին եկել է ստանալու օրհնութիւնդ. ես եմ, հաջին եմ, որդիդ եմ, մի մերժիր ինձ»: Եւ իսկոյն չորեցի մեռնող հօրս մահճակալի կողքին և բռնելով նրա ձեռքը՝ համբուրեցի և որդիական սէրս ապացուցանելու համար սկսեցի խիստ դառնութեամբ լալ ու ողբալ:

Լացս ու կոծս շատ ազդեց ներկայ եղողներին, որոնցից մի քանիսը յուսահատութեամբ թթուացրին իրանց երեսները, մի քանիսը կ'ասես թէ չհաւատացին թէ՛ ես էի հաջին, և բոլորը միասին ապշեցին ու զարմացան:

Հօրս աչքերը որ գրեթէ բոլորովին փակել էին, մի քանի վայրկեան բացուեցին, և նա աշխատեց ճանաչել ինձ դէմքիս գծադրութիւնից: Իր դողդոջուն ձեռքերը իրար վրայ դնելով բացազանչեց. «Ահա մդ օլ Ալլահ (գոհութիւն Աստծու), ես արժանացայ որդուս տեսնելու. ահա ժառանգս: Յետոյ դառնալով ինձ՝ ասաց. «Որդիս, ընչո՞ւ այսքան տարիներ հեռու մնացիր ինձանից, լիւ արիւր, ինչո՞ւ աւելի շուտ չեկար»: Զայրս գուցէ դեռ կը շարունակէր, բայց այդպիսի հանգամանքից յուզուելով ու ճիգ թափելով՝ նա շնչասպառ եղաւ:

—Սպասիր, ասաց իմ ծերունի ուսուցիչը, որ իսկոյն ճանաչել էր ինձ.—սպասիր, հնչի, մի լար, մի սգար, թող հայրդ ուշքի գայ, նա դեռ կտակ պիտի անէ:

—Բալի, բալի, ասաց մի ջահիլ մարդ, որը թշնամական աչքերով էր նայում ինձ.—բալի, մենք պէտք է նաև տեսնենք թէ արդեօք դա իսկապէս Հաջի Բարան է, թէ ուրիշ մէկը:

Այդ ջահիլ մարդը, ինչպէս ես յետոյ իմացայ, հօրս առաջին կնոջ եղբայրն էր: Նա մեծ յոյս ունէր ժառանգելու ինձ պատկանելիք ինչքի մի մասը, և երբ ես հետաքրքրուեցի իմանալու թէ ովքեր էին միւս մարդիկը, բանից դուրս եկաւ որ նրանք բոլորն էլ նրա նման հեռաւոր ազգականներ էին և եկել ժողովուրդ էին հօրս շուրջը բաժին ստանալու այն աւարից, որից ես զրկում էի նրանց իմ ներկայութեամբ: Նրանք բոլորն էլ կ'ասես թէ չէին հաւատում որ ես էի Հաջի Բարան, որ ես էի հօրս ժառանգը, և թերևս նրանք միաձայն ինձ խարդախ, խաբէրայ կը հրատարակէին, եթէ ներկայ չլինէր իմ ուսուցիչը, որի վկայութեան դէմ ոչ ոք չէր համարձակուի բան խօսել:

Ինչպէս, նրանց բոլորի կասկածները փարատուեց մօրս երևալովը, որը լսելով որ ես հասել էի, չկարողացաւ փակուած մնալ անդէրոշնում, այլ դուրս վազելով՝ եկաւ տղամարդկանց մէջ և տարածուած բազումներով դռնեց. «Ո՛ւր, ո՛ւր է նա, ո՛ւր է որդիս. հնչի, ո՛րդիս, ո՛ւր ես:

Երբ նա տեսաւ ինձ, առաջ վազեց, փաթաթուեց վզովս և բարձր ձայնով լացեց: Որչափ նա կարող էր, գործովալից խօսքեր ասաց և զննեց ինձ այնպիսի անյագ աչքերով, այնպիսի բուռն զգացումներով որ միմիայն մայրը կարող է զգալ այդպիսի զէպքերում:

Հօրս իր խոր քնից արթնացնելու համար, որի մէջ ըստ երևոյթին նա ընկել էր, բժիշկը առաջարկեց մի զօրացուցիչ դեղ տալ նրան: Նա պատրաստեց այդ դեղը և աշխատեց ամէլ նրա բերանը: Երբ մեռնող հօրս մի քիչ բարձրացրին, նա միանգամ փռնգաց. բոլորն էլ իմացան որ դա վատ նշան էր, և ոչ մի խնդրի տէր մարդ չէր վստահանալ բժշկի պատրաստած դեղը նրան խմացնել, մինչև որ գոնէ երկու ժամ չանցնէր. ուստի դեղը մնաց բաժակում:

Երկու ժամ սպասելուց յետոյ կրկին փորձ արուեց դեղը նրա բերանն ածելու. բայց բոլոր ներկայ եղողները սոսկացին, և ժառանգութիւն ակնկալողները յուսահատուեցին, երբ տեսան որ նա արդէն քարի պէս անշունչ էր:

—Յանուն Ալլահի, ելի՛ր, ասաց հօրս ծեր մոլլան. մենք ուղում ենք գրել կտակդ:

Եւ նա աշխատեց հօրս գլուխը բարձրացնել, բայց իզո՛ւր-նա մեռած էր:

Իսկոյն մի կտոր բամբակ ջրի մէջ թաթախեցին և քամեցին նրա բերանում. նրա ոտները դէպի ղէքլին դարձրին և հէնց որ ստուգուեց որ այլևս յոյս չկար, նրա մնարի մօտ նըստած մոլլան սկսեց երգի եղանակով կարդալ զուրանը: Յետոյ մի թաշկինակ անկացնելով նրա ծնօտի տակ՝ ծայրերը կապեցին գլխի վրայ, և նրա ոտի բոյթերն էլ կապուկցին իրար: Այդ անելուց յետոյ բոլորն սկսեցին միաձայն արտասանել քէլէմէյէ շէհադաթը (հաւատի դաւանանքը), մի պաշտամունք, որ իրանց կարծիքով պիտի ննջեցեալին դուրս ուղարկէր այս աշխարհից որպէս մի մաքուր և լաւ հաստատուած մուսուլման: Մինչդեռ դաւանութիւնը կարդացոււմ էր, մի բաժակով ջուր դրուեց նրա գլխովերևում:

Այս բոլոր նախապատրաստական արարողութիւնները կատարուելուց յետոյ ամբողջ խումբը, որ բաղկացած էր (ինչպէս իրանք էին ասում) ազգականներից ու բարեկամներից, հաւաքուեցին դիակի շուրջը և սկսեցին բարձր և տխուր ձայնով աղաղակել: Այս աղաղակը մի նշան էր կտրի վրայ արդէն պատրաստուած երկու մոլլաներին, որոնք իսկոյն սկսեցին բարձր ձայնով երգել զուրանից միքանի կտորներ, կամ կտորներ՝ որ երգում են այդպիսի դէպքերում յայտարարելու հասարակութեանը՝ թէ մի ճշմարիտ հաւատացեալ է վախճանուել:

Լացն ու կոծը այժմ ընդհանուր դարձաւ, որովհետեւ հօրս մահուան բօթը հաղորդուեց կանանց ևս, որոնք հաւաքուելով մի առանձին սենեակում՝ սկսեցին լաց ու գոռիք անել ամենաընդունուած ձևերովը: Իր հեղութեամբ և հաճոյակատարութեամբ հայրս սիրելի էր դարձել ամեն դասակարգի մարդկանց, և մայրս, որ պաշտօնական լալկան էր ու լաւ ծանօթ էր իր պաշօնակիցներին, շուտով լալկաններից այնպիսի մի մեծ խումբ հաւաքեց իր շուրջը որ ասոււմ էր թէ ոչ մի խանի համար այդպիսի լաց ու կոծ դեռ չէր եղել:

Բոլորն էլ լալիս էին, իսկ ես—որ զգացումներս դժբախտութիւններից առաջացած տխրութեան ու վշտի ամենաբարձր աստիճանին էի հասցրել, սկսեցի մի իսկական սգուոր դառնալ և յիշելով իմ տխուր անցեալը, յիշելով թէ ինչ ապերախտութեամբ մոռացել, անտես էի արել ծնողներիս, սկսեցի աւելի ու աւելի տխրել, ու իմ վիճակս բոլորովին աննախանձելի թուաց ինձ:

Ես հանդարտ նստած էի մի անկիւնում և իմ անկեղծ հա-
ռաչանքներով մասնակցում էի խմբի լաց ու կոծին, երբ մի
մոլլա մօտս եկաւ և ասաց թէ հարկաւոր էր որ ես շորերս
պատռէի ցոյց տալու, որ ես էի հանգուցեալի հարազատ որդին
ու ժառանգը, և որ, եթէ կամենայի, ինքը յանձն կ'առնէր
պատռելու շորերս առանց փչացնելու նրանց:

Ես համաձայնուեցի, և նա քաշեց պատռեց կուրծքս ծած-
կող մասը: Նա յետոյ ինձ ասաց որ ըստ սովորութեան
ես պարտաւոր էի գլխաքաց ու ոտաքորիկ մնալ—գոնէ մինչև
յուղարկաւորութիւնը կատարուէր վերջանաւ: Ես վերջապէս
վարուեցի այնպէս, ինչպէս մոլլան խորհուրդ տուեց ինձ, և շատ
ուրախացայ, երբ լսեցի որ մարդիկ ինձ համարել էին մի կա-
տարեալ և իսկական սգուորի օրինակ:

Մայրս շատ էր ջարդում իրան, ըստ երևոյթին նրա վիշ-
տըն ու կսկիծը շատ սաստիկ էր: Մի սեշալով նա ծածկել էր իր
գլուխն ու մազերը, լալիս էր խորին վիշտ արտայայտող բացա-
զանչութիւններով և շարունակ հօրս անունն էր արտասանում:

Մինչ այս, մեր հարևանները, փողոցի անցորդները, մեր
բոլոր ազգականները և նոյնիսկ մեր գերդաստանին բոլորովին
անծանօթները հաւաքուեցին մեր տան շուրջը դուրան կարդա-
լու կամ լսելու համար, որ մի վարձք է համարւում այդպիսի
դէպքերում: Նրանցից շատերը եկան իբրև մխիթարախօսներ,
որոնք իրանց ճարտարախօսութեամբ բաւական մեծ նշանա-
կութեան էին արժանացնում ննջեցեալին և յարգանք էին ըն-
ծայում նրա գերդաստանին: Իմ ուսուցիչը, որ մի հմուտ և
ճարտար մխիթարախօս էր, նստելով կողքիս՝ ձեռքս բռնեց ու
խօսեց այսպէս.

— Բալի, վերջապէս հայրդ մեռաւ, թող այդպէս լինի, ու-
չինչ վնաս չէ եղել: Միթէ մահը ամեն բանի վախճանը չէ.
հայրդ ծնունց, ամուսնացաւ, մի որդի ունեցաւ, իր ընթացքն
աւարտեց ու մեռաւ: Ո՞վ է կարող դրանից աւելին անել: Այժմ
այս աշխարհում դու նրա յաջորդն ես, նրա փոխանորդն ես.
դու այն նորաբոյս ցօղունն ես, որ միլլիօնաւոր ուրիշ ցօղուն-
ների հետ միասին առատ հունձ է խոտանում, այնինչ հայ-
րդ այն լաւ հասունացած հասկն է, որ արդէն հնձուել ու
ամբարուել է: Եւ միթէ դու պիտի վշտանաս, միթէ դու պիտի
դժգոհես այն բանի վրայ, որ ուրախութեան մի նիւթ, մի աղ-
բիւր է քո համար: Մարդկանց սափրելու փոխարէն հայրդ այ-
ժմ երկու հուրինների մէջտեղ նստած՝ կաթ է խմում, մեղր է
ուտում, և միթէ դու պիտի լմա այդ երանութեան համար: Ո՞չ,

... Եւ երբ լսաւ, որ ու պիտի լսաւ ու սգաս նրա համար, որ ին-

քող էլ այնտեղ չես. բայց չէ, ի՞նչ եմ ասում, երբէք էլ չպիտի լալ, չսիր, հանջի, հայրդ կարող էր մի անհաւատ լինել, սակայն նա մեռաւ մի ճշմարիտ մուսուլման: Նա կարող էր տաճիկ լինել, սակայն նա մեռաւ որպէս պարսիկ: Նա կարող էր սուննի լինել, սակայն նա մեռաւ որպէս իսկական շիա: Նա կարող էր մի պիղծ քրիստոնեայ լինել, սակայն նա մեռաւ որպէս իսլամի հարազատ որդի: Նա կարող էր մեռնել որպէս մի անիծուած հրէայ, սակայն նա հոգին աւանդեց՝ մինչդեռ հաւատի դաւանանքի խօսքերը իր շրթունքների վրայ էին: Եւ միթէ այս բոլորը ուրախութիւն պատճառող բաներ չեն. այո՛, հանջի, դու չպիտի տխրես, դու չպիտի լսա ու սգաս, այլ պիտի ուրախանաս:

Վերջացնելով իր միեւթարական խօսքերը՝ ուսուցիչս վեր ելաւ և գնաց մասնակցելու ընդհանուր լացուկոծին: Յետոյ ներս կանչուեցին մորդէշուրները (մեռելին լուացողներ) — այդ անմաքուր մարդիկը՝ որոնք եկան իրանց հետ բերելով մի թարութ, որի մէջ պիտի դրուէր հօրս դիակը և տաւուէր թաղուելու: Ինձանից խորհուրդ հարցրին թէ՛ արդեօք հարկաւոր էր թարութը զարդարել իմարէով*), որով ծածկոււմ են մեծ անձնաւորութիւնների թարութները, սակայն ես թողեցի վճիռը իմ ուսուցչին, որը իսկոյն ինձ ասաց թէ՛ որովհետեւ հայրս հասարակութեանը սիրելի մի մարդ էր և վայելում էր բոլորի համակրանքը, ուստի հարկ էր որ նրա դագաղին դրուէր տարբերութեան նշանը, այսինքն զարդարել նրան իմարէով: Նրա առաջարկը ընդունուեց ու կատարուեց: Հետո ազգականները դուրս բերին դիակը և թարութի մէջ դնելով՝ տարան այնտեղ, ուր պիտի կատարուէր լուացման արարողութիւնը, և ուր նրա դիակը յանձնուեց մորդէշուրներին, որոնք անմիջապէս սկսեցին իրանց գործը: Ամենից առաջ նրանք պաղ ջրով լուացին մարմինը, յետոյ տորեցին կրով, քափուրով ու աղով և ապա պատանքելով՝ դրին թարութի մէջ և տարան գերեզմանոցը:

Շատերը յօժարութեամբ իրանց ուսերի վրայ առան թաւութը և տարան, դա ապացոյց էր թէ՛ նա ինչքան էր սիրուում ամենից: Նոյնիսկ օտար, անծանօթ մարդիկը՝ մուսուլմանի դագաղ տանելը մի արժանավայել գործ համարելով՝ առաջ էին գալիս և իրանց ուսերի վրայ առնում թաւութը և տանում. այդպիսով մինչև դիակը գերեզման հասաւ, արդէն մեծ բազմութիւն էր հաւաքուել:

*) Իմարէն մի տեսակ ծածկոյթ է, որ զարդարուած է դրօշակներով, շալերով և ուրիշ թանկագին կտորներով:

Հօրս դազաղից քիչ հեռու հետևում էի ես: Ինձ հետ քայլում էին նրանք՝ որոնք իրանց ազգականներ ու բարեկամներ էին ձևացնում: Գերեզմանի մօտ թաքութը վայր դրուեց, և երբ մի մուլա բոլորի ձայնակցութեամբ մի աղօթք կարդաց, ինձ հրաւիրեցին, որ որպէս որդի և ժառանգ՝ դիակը յանձնեմ հողին: Վերջապէս դիակը գերեզմանի մէջ դրուեց, և կարդացուեց մի ուրիշ աղօթք, որ կոչւում է թալիսի: Տասներկու իմամներին կոչ եղաւ, և մի երկրորդ անգամ թալիսին կարդացուելուց յետոյ գերեզմանը ծածկուեց: Ապա բոլոր հանդիսականները կրկնեցին Ֆաթէն (ղուբանի առաջին գլուխը), և գերեզմանի վրայ ջուր ցանկուց յետոյ բազմութիւնը ցրուեց: Մուլաներից մէկը մնաց գերեզմանի մօտ աղօթելու համար:

Այժմ, մտածեցի ես, ուզեմ, չուզեմ՝ պիտի կատարեմ ուխտս: Ես պիտի վստահութեամբ փող մսխեմ, եթէ ոչ ինձ հարազատ որդի չեն համարիլ: Տուն դառնալով՝ ես կուրօրէն պատուիրեցի որ ամեն բան վայելուչ կերպով պատրաստուէր: Երկու սենեակներ պատրաստուեցին—մէկը աղամարդկանց, իսկ միւսը կանանց համար: Ընդունուած սովորութեան համեմատ, ես իբրեւ գլխաւոր սգուոր մի խնջոյք տուի՝ այն բոլորին՝ որոնք ներկայ էին եղել հօրս յուղարկաւորութեանը: Խոստացած ոչխարը մորթուեց, փաւը պատրաստուեց: Ես վարձեցի երեք մուլաներ, որոնցից երկուսին նշանակեցի զուբան կարդացողներ աղամարդկանց սենեակում, իսկ երրորդին ուղարկեցի հօրս գերեզմանի գլուխը այնտեղ նրա համար արդէն պատրաստուած մի փոքրիկ վրանում կենալու և հօրս համար անդադար աղօթելու:

Սգի տևողութիւնը որ լինում է երեք, հինգ, տասն օր կամ մի ամբողջ ամիս, իհարկէ՝ նայած թէ հանգուցեալը ինչքան նիւթական կարողութիւն ունի, ես հինգ օր նշանակեցի: Այդ հինգ օրուայ ընթացքում ամեն օր մեր ազգականներից մէկնումէկը մի խնջոյք էր տալիս ի պատիւ հանգուցեալ հօրս: Հինգ օրը լրանալուց յետոյ մի քանի պառաւ կանայք ու մարդիկ գնացին սգուորների մօտ և կարեցին կամ նորոգեցին նրանց շորերը և ինձ առաջարկեցին կրկին մի խնջոյք տալ: Ես կատարեցի նրանց առաջարկը և խնջոյքի օրը զուբանը առանձին-առանձին թերթերով բաժանուեց հանդիսականների մէջ, որոնք այնքան կարդացին, մինչև որ ամբողջ սուրբ գիրքը վերջացաւ:

Խնջոյքից յետոյ մայրս իր ազգականների և բարեկամների հետ միասին գնաց հօրս գերեզմանի գլուխը՝ տանելով իր հետ թափա հաց ու քաղցրաւենիք, որոնց մի մասն ուտելուց

յետոյ մնացորդը բաժանեցին աղքատներին և իրանք վերադարձան լալով ու ողբալով:

Երկու կամ երեք օրից յետոյ մօրս բարեկամներն եկան նրան տարան բաղնիք, ուր նրանք հանեցին նրա սգի շորերը, լողացրին, ձեռներն ու ոտները հինալով ներկեցին և մի ձեռք նոր զգեստ հագցրին նրան: Եւ այս ծիսակատարութեամբ վերջացաւ ամեն բան, և ի մեծ ուրախութիւն իմ ես մնացի ինքս ու ինքս կանոնաւորելու հօրս գործերը և ծրագիր կազմելու իմ ապագայի համար:

Գլ. խթ.

Հաջի Բարան ժառանգում է իր հօր ունեցածը, սակայն չէ կարողանում իմանալ՝ թէ որտեղ է պահուած նրա փողը:— Նրա կասկածները:

Հայրս մեռաւ առանց կտակ անելու. բայց ես, իհարկէ, առանց այլաբանութեան հրատարակուեցի նրա միակ ժառանգը, և հետեւաբար բոլորովին ի դերեւ եկան այն մարդկանց յոյսերը, որոնք ձգտել էին բաժին ստանալու հօրս ստացուածքից և որոնք իսկոյն յետ քաշուեցին, իհարկէ՝ հետս թշնամանալով: Նրանք ամեն տեսակ չարախօսութիւններ արին ինձ դէմ և աշխատեցին մարդկանց հաւատացել որ իբր թէ ես մի ողորմելի, անհաւատ, բախտախնդիր մարդ եմ եղել, անարգել եմ ծնողներին և լութիւնների ու թափառական դէրվիշների ընկեր եմ եղել միշտ:

Որովհետեւ ամենեւին նպատակ չունէի Սպահանում մնալու, ուստի ես արհամարհանքով վերաբերուեցի դէպի թշնամիներս և բաւականացայ նրանց ծաղրաբանութիւններին պատասխանել այնպիսի արտայայտութիւններով՝ որ ոչ իրանք և ոչ էլ իրանց հայրերն էին լսել—արտայայտութիւններ՝ որ ես սովորել էի այն անձերից, որոնց շրջանում ես անց էի կացրել իսկերիսսարդութեանս առաջին օրերը:

Երբ ես ու մայրս մնացինք մենակ, բաւական սրտածմլիկ կերպով ողբալուց յետոյ—նա իր ամուսնու կորուստը, իսկ ես՝ հօրս, հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ մեր մէջ:

—Այժմ, մայր, ասա ինձ, այլեւ ոչինչ բան չպիտի գաղտնի մնայ մեր մէջ, յայտնի՞ր ինձ թէ քէրբէյ Հասանը ինչ դրութեան մէջ մտաւ. այսինքն՝ ի՞նչ ունէր, ի՞նչ չունէր նա: Նա սիրում և հաւատ էր ընծայում քեզ, և բնականաբար դու

աւելի լաւ տեղեակ պիտի լինես նրա գործերին, քան որեւէ ուրիշ մէկը:

—Է՛հ, որդիս, ես ի՞նչ գիտեմ նրա գործերի մասին. ես ի՞նչ գիտեմ թէ նա ի՞նչ ունի, ասաց մայրս ակներեւ շփոթութեամբ: Ես...

—Դու գիտես, ասացի ես ընդհատելով նրան,—դու գիտես որ օրէնքը պահանջում է որ որդին վճարի իր հօր պարտքերը. ուստի հարկաւոր է որ շուտով ստուգուի թէ հայրս պարտ ունի թէ չէ: Բացի դրանից, նրա յուղարկաւորութեան համար եղած ծախքերը պիտի շուտով վճարուեն, և գիտես որ արդէն բաւական մեծ ծախք է եղել ու ես էլ առայժմ այնքան զուրկ եմ նիւթական միջոցներից՝ ինչքան էի այն օրը՝ երբ դու ծնար ինձ: Անհրաժեշտ է որ շուտով հատուցանեմ այդ ծախքերը, եթէ ոչ և՛ իմ, և՛ իմ հօրս անունը կը խայտառակուի մարդկանց մէջ, և ես կ'ընկնեմ թշնամիներին առաջ: Դու գիտես որ հայրս հարուստ մարդ էր համարւում. եթէ մարդիկ վստահ չլինէին նրա հարստութեան մասին, նրա մահուան անկողինը շրջապատուած չէր լինի մի խումբ պատառաբաներով և դատարկապորտներով, որոնց ես իմ վրայ հասնելովս յուսակտուր արի և յետ քշեցի: Մայրս, ինձ պիտի ասես թէ նա որտեղ էր ապահովացնում իր կանխիկ դրամները, ովքեր էին կամ հաւանականօրէն ովքեր են նրա պարտապանները, և թէ հայրս ուրիշ ի՞նչ կայք ունի:

—Ո՛վ, Ալլան, բացազանչեց մայրս. այս ի՞նչ խօսքեր են: Ո՛րդիս, հայրդ մի խեղճ, բարի մարդ էր. նա ոչ փող ունէր, ոչ էլ գոյք: Փող ես ասում. մենք չոր ու ցամաք հացով էինք ապրում. ուրիշ ոչինչ չէինք կարողանում ուտել: Է՛հ, երբեմն երբ մի մեծ կարաւան էր գալիս և շատ սափրեւու գլուխներ էին լինում, այդ օրը մենք մի քիչ փլաւ ու խորոված էինք ուտում: Է՛հ, շատ, շատ, մի կտոր հաց, մի կտոր պանիր, մի հատ սոխ, մի քիչ մածուն—դրանք էին մեր սովորական կերակուրները: Որդիս, այսպիսի պայմաններում ապրող մարդը փող կ'ունենայ, դու փողի՞ մասին ես հարցնում, այն էլ կանխիկ դրամի: Ահա այս տունը, յետոյ նրա խանութն ու գործիքները, դրանք, միայն դրանք են նրա ունեցածները. ուրիշ ոչինչ չունի նա, նրա ունեցածի մասին ես միայն այդ գիտեմ: Որդիս, դու լաւ ժամանակին հասար. դու կարող ես հօրդ տեղը նստել, շարունակել նրա արհեստը, և, ինչպիսի՞նչ ձեռքդ բարեկը լինի, ու գործդ յաջող կը գնայ: Տայ Աստուած որ ձեռքդ երբէք պարապ չլինայ:

—Շատ տարօրինակ բան է սա, բացազանչեցի ես. յի-

սուն աարուայ անդուլ աշխատանքից յետոյ այժմ ոչի՛նչ չունի հայրս: Սա զարմանալի է, հաւատալու բան չէ: Չէ՛, այսպէս չի լինի. ես պիտի կանչեմ գուշակներին:

— Ի՞նչ, գուշակներին, բացագանչեց մայրս յուզուելով. ինչի՛ պէտք են նրանք: Նրանց միայն կանչում են, երբ հարկաւոր է իմանալու թէ՛ ո՞վ է գողը, և դու, հա՛ջի, որդիս, ուզում ես մօրդ գող համարել: Գնա՛, որդիս, և հետաքրքրուի՛ր քո հօր բարեկամ ախունդից *). Նա լաւ ծանօթ է հօրդ բոլոր գործերի հետ, և ես վստահ եմ որ նա պիտի կրկնի այն՝ ի՛նչ որ ես արդէն ասել եմ:

— Դու շատ ճիշդ ես ասում, մայրս, ասացի ես. հաւանական է որ ախունդը լաւ գիտէ թէ՛ ինչ էր հօրս վերջին ցանկութիւնը, որովհետեւ ես նկատեցի որ նրա մահուան ժամին նա էր որ հրահանգներ էր տալիս, և թերեւս նա ինձ կը յայտնի թէ՛ նրա փողը հրտեղ է պահուած, և թէ՛ թողել են որ մընայ իր տեղում:

Ես իսկոյն գնացի ծերունի ախունդի մօտ: Շրջապատուած իր աշակերտներով՝ նա նստած էր մզկիթի ճիշտ այն անկիւնում՝ որտեղ նա նստում էր մօտաւորապէս քսան տարի առաջ, երբ ինքս էլ նրան աշակերտում էի: Ինձ տեսնելուն պէս նա արձակեց իր աշակերտներին ասելով նրանց, որ իբր թէ իմ քայլերը բարեբեր էին, և հարկաւոր էր որ ինքն էլ, նրանք էլ օգտուէին այն հաճութից որ ես պատճառում էի, ուր որ գնում էի:

— Է՛յ, ախունդ, մի՛ ծիծաղիր մօրուքիս վրայ. իմ բախտը, իմ բարի բախտը բոլորովին անտես է արել ինձ: Ես յոյս ունէի, որ հօրիցս զրկուելուց յետոյ գոնէ նրա հարստութիւնը ձեռքս կը վար իբրեւ փոխարինութիւն նրա կորստեան, սակայն, ընդհակառակը, ինչպէս երևում է, ես պիտի յոյսս կտրեմ և աւելի մի թշուառ մուրացկան դառնամ:

— Ալլա՛հ քէրիմ (Աստուած ողորմած է), ասաց ախունդը և իր աչքերը դէպի երկինքը դարձնելով և ձեռքերը, թաթերը դէպի վեր, ծնկների վրայ դնելով՝ գոչեց. ՁՈ՛ւ Ալլահ, ինչ որ է՝ դու ես: Ապա դառնալով ինձ՝ ասաց.

— Բա՛լի, որդիս, այսպէս է աշխարհը և այսպէս էլ միշտ կը լինի, քանի որ մարդ չէ փակում իր սիրտը մարդկային բաղձանքների դէմ: Դու ոչինչ մի՛ ուզիր, ոչինչ մի՛ փնտրիր և կը տեսնես որ ոչոք չի փնտրել քեզ:

*) Մի մոլլա, որ ուսուցիչ է մի գալոցում, կոչում է ախունդ: Այստեղ այս ախունդը Հաջի Բաբայի ուսուցիչն է:

—Որքան ժամանակ է ինչ դու սուֆի ես դառել, հարցրի ես, որ այդ ձևով ես խօսում: Ես ինքս էլ կարող եմ այդպիսի խօսքեր խօսել, սակայն այժմ միտքս ուրիշ խնդիրներով է ըզբաղուած:

Ես յետոյ յայտնեցի նրան թէ ես ինչ նպատակով էի այցելել իրան, և խնդրեցի նրանից ասել ինձ ամեն բան ինչ նա գիտէր հօրս ունեցած-չունեցածի մասին: Երբ նա իմացաւ նըպատակս, սկսեց հազալ և իր դէմքին իմաստութիւն տալով՝ անցաւ մի երկար շարք երդումների և խոստովանութիւնների միջով և վերջացրեց կրկնելով ինձ համար այն՝ ինչ որ մայրս ինձ արդէն ասել էր. այսինքն՝ որ ինքը հաւատում էր թէ հայրս մեռել էր առանց Նաւդո (կանխիկ) դրամ ունենալու, և թէ իմ գիտեցածից զատ՝ հայրս ուրիշ ոչինչ չունէր:

Միքանի բոպէ յուսահատութիւնից լուռ մնացի. բայց յետոյ զօրեղ շեշտերով արտայայտեցի իմ մեծ զարմանքը: Ես գիտէի որ հայրս, իբրեւ մի բարի մուսուլման, ամենևին վաշխով փող պարտք չէր տալ ուրիշներին, որովհետեւ պատանութեանս ժամանակ մի հանգամանք ցոյց էր տուել որ նա այդ բանը չէր անի: Օսման աղան՝ իմ առաջին աղան մի անգամ ուզեց փող պարտք վերցնել հօրիցս՝ խոստանալով լաւ տոկոսով վերադարձնել ժամանակին. սակայն հայրս ասաց որ դորանը բոլորովին արգելում է այդ բանը, արգելում է տոկոսով փող պարտք տալ, և փող չտուեց: Բայց թէ այդ օրից հօրս սկըզբունքները թուլացել էին, այդ ես չգիտէի. սակայն ես համոզուած էի որ նա միշտ դէմ էր եղել վաշխով փող պարտք տալուն, որովհետեւ նա շատ ապօրինի բան էր համարում դա, և գիտէի որ մինչև իր կեանքի վերջին բոպէն էլ նա նոյնն էր— ճշմարիտ հաւատացեալի կատարեալ օրինակ էր նա:

Դժգոհ և տխուր սրտով ես թողի մզկիթը և քայլերս ուղղեցի դէպի այնտեղ, ուր ես առաջին անգամ հանդէս էի եկել կեանքի ասպարէզում, այսինքն՝ հօրս խանութը, ճանապարհին մտածելով թէ ինչ միջոցների պիտի դիմել ապագայ ապրուստիս համար: Սպասանում մնալս անկարելի էր, որովհետեւ այդ քաղաքը և բնակիչները ատելի, զգուելի էին դառել ինձ. ուստի ինձ միայն մնում էր ծախել ինչ որ իմ սեփականութիւնս էր ու վերադառնալ Թէհրան, որը վերջապէս, ես համոզուած էի, ամենալաւ տեղն էր ինձ պէս մի մարդու համար՝ որին վիճակուած էր այնքան արկածների հանդիպել:

Ինչևէ, ես չէի կարողանում համոզուել որ հայրս մեռել էր առանց Նաւդո փող ունենալու, և սկսեցի կասկածել, որ հօրս փողերի վրայ մի խաղ էր արուել: Ես չէի հասկանում թէ ո՛ւմ

պիտի դիմել: Ես մտածում էի դիմել դատաւորին, երբ արքունական քարվանսայի դրան ժողովնալով՝ հանդիպեցի ծերունի ղռնապանին, որն ինձ ասաց.

— Սէլամն ալա՛յքում, աղա: Շատ տարիներ ապրես: Ալլահը քեզ աւելի առատութիւն պարգևի. աչքերս «լուսաւորւում են, երբ քեզ տեսնում եմ»:

— Ալի Մոհամէդ, երևի այսօր շատ լաւ տրամադրութիւն ունիս, որ մյգպէս ես խօսում հետս: Բայց առատութեան մասին որ դու ես խօսում, այժմ վշտի առատութիւն է դարձել, որովհետև դրանից զատ՝ ուրիշ ոչինչ չունիմ: Ա՛խ, հառաչեցի ես, լեարդա ջուր է կտրել. հողիս թառամել, չորացել է:

— Միթէ բան է պատահել քեզ, հարցրեց Ալի Մոհամէդը. հայրդ (խաղաղութիւն նրան) նոր է մեռել. դու նրա ժառանգն ես, դու երիտասարդ ես և, մաշալլահ, բաւական զեղեցիկ, ուշիմ ու ճարտարամիտ ես. էլ ի՞նչ է պակասում քեզ:

— Ճշմարիտ է, ես նրա ժառանգն եմ. բայց դրանից ի՞նչ օգուտ, քանի որ ինձ ընկել է միայն մի ցեխէ տուն, մի քանի հնամաշ կարպետներ, փթած կարասիներ և այդ խանութը՝ որի մէջ կայ մի պղնձէ կոնք ու կէս դիւթին ածելիներ. էհ, թքել եմ այդպիսի ժառանգութեան վրայ:

— Բայց ո՛ր է փողդ, կանխիկ դրամդ, հաջի, հարցրեց նա: Հայրդ (Ալլահը նրա հետ) այնքան յայտնի էր իր ժաւաութեամբ փող ծախսելու մէջ, որքան նա յայտնի էր իր առատաձեռնութեամբ օճառի փրփուրի գործածութեան մէջ: Ամեն մարդ դիտէ որ նա շատ փող է դիզել, և որ նա մէկ օր չի անցկացրել առանց մի բան աւելացնելու իր գանձի վրայ:

— Այդ կարող է ճշմարիտ լինել, ասացի ես. բայց դա ի՞նչ օգուտ ունի ինձ համար՝ քանի որ ես չեմ կարողանում սեփականացնել դրան. ես չեմ կարողանում իմանալ թէ հայրս որտեղ է պահել իր փողը: Մայրս ասում է թէ նա փող չունէր, ախունդն էլ նոյն բանն է ասում, ես էլ հօ կախարդ չեմ որ կարողանամ ճշմարտութիւնը երևան հանել: Ես մտածում եմ դատաւորին դիմել:

— Դատաւորին դիմել, զարմացաւ Ալի Մոհամէդը. Ալլահն արգելի: Դատաւորի մօտ ամենեւին մի գնար, օգուտ չունի: Իմ բացակայութեան ժամանակ որքան ուզում ես զարկէր այս քարվանսայի դուռը, եթէ դա կը բացուի՝ իմացիր, որ դատաւորն էլ քեզ արդարութիւն կ'անի առանց քեզ լաւ քամելու: Դատաւորն իր արդարադատութիւնը միսխալով է ծախում, այն էլ շատ թանկ գնով ու վերջն էլ նա շատ քիչ է ծախում: Առանց ոսկի ստանալու՝ նա ղուրանի մէկ

Թերթն անգամ չի դարձնում, այդպէս մարդ է նա: Այս էլ ասեմ, որ եթէ հօրդ փողերը իւրացնողները քո թշնամիներն են, չեն կարծում որ նրանք այդ քսակները կը դատարկեն դատաւորի գրպանում և կը պարտաւորացնեն որ նա քեզ յաջող ոչինչ չխօսի:

— Ուրեմն ի՞նչ պիտի արած, հարցրի ես. գուցէ գուշակները կարող են մի կերպ օգնել ինձ:

— Վնաս չկայ դրա մէջ, պատասխանեց Ալի Մոհամէդը, այս քարվանսարայում եղած ժամանակի ընթացքում ես յաճախ լսել եմ որ նրանք մեծ յայտնութիւններ են արել: Յաճախ պատահել է որ վաճառականները կորցրել են իրանց փողերը և նրանց միջոցաւ կրկին գտել են. միայն թիւրքմէնների յարձակման դէպքում էր, որ քարվանսարայից շատ բան դողացուեց, նրանք չկարողացան գտնել գողերին: Ահ, դա մի տարօրինակ դէպք էր: Դա մեծ թշուառութիւն բերեց գլխիս, որովհետեւ մի քանի չարախօս մարդիկ տարածայնեցին, որ իբր թէ ես էլ գործակից էի եղել աւազակներին, և բացի այդ՝ զարմանալին այն է, որ նրանք ասացին որ իբր թէ Հաջի Բաբան—դու էլ նրանց հետ էիր, որովհետեւ քո անունով էր որ այդ շան որդիները խաբեցին ինձ և դուռը բանալ տուին. շան ծնունդները ի՞նչպէս թալանեցին մարդկանց:

Ես բախտաւոր էի որ Ալի Մոհամէդի աչքերը լաւ չէին տեսնում, եթէ ոչ, նա կարող կը լինէր նկատել դէմքիս այլայլութիւնը, երբ խօսեց թիւրքմէնների մասին: Ինչևէ, մեր խորհրդակցութիւնը վերջացաւ նրանով, որ դռնապանը խոստացաւ ինձ մօտ ուղարկել Սպահանում ապրող ամենահմուտ գուշակին—մի մարդ, որը, ասաց նա, կարող էր գեանից ոսկի հանել, թէկուզ դա 20 գազ խորը թաղուած լինէր, կամ մինչև անգամ դա թաղուած լինէր Քաշանի նշանաւոր հորի տակ *):

Գլ. Ծ.

Թէ Հաջի Բաբան ինչ միջոցի է դիմում իր ժառանգութիւնը ձեռք բերելու համար, եւ թէ ով է գուշակը—Թիզ Նէգան:

Միւս առաւօտ՝ առաջին աղօթքից անմիջապէս յետոյ, մի կարճահասակ, կուղ մարդ մտաւ սենեակս: Գուշակն էր նա, ու

*) Ժողովուրդը հաւատում է որ Քաշան քաղաքի մօտ կայ տառապեղան խորութեամբ մի հոր, որի տակում գտնւում են կախաբերուած պարտեղներ ու ծառաստաններ:

րին ինձ մօտ էր ուղարկել Ալի Մոհամէդը: Նրա գլուխը շատ մեծ էր, աչքերը զարմանալի կերպով փայլուն, և նրա դէմքն այնքան խելք ու հնարագիտութիւն էր արտայայտում, որ ես զգացի որ նա մէկ հայեացքով կարող էր թափանցել իմ ամբողջ էութեան մէջ: Նրա դէմքի շրջանի գլխարկի տակից իջնում էին խիտ, սև մաղեր, որոնք նրա թաւ մօրուքի հետ միասին մեծ խտութիւն ու համարձակութիւն էին տալիս նրա կերպարանքին: Նրա աչքերը, որ արտահանուքի մի արագ շարժումով (կեղծ՝ թէ հարազատ՝ չգիտեմ) պսպղում էին աստղերի նման,—մի փոքրիկ դևի կերպարանք էին տալիս նրան—այդ հրէշին, որ մի կարգին դաժանակից աւելի բարձր չէր:

Նա սկսեց շատ մանրակրկիտ կերպով հարցուփորձ անել ինձ: Նա ստիպեց ինձ մանրամասնութեամբ պատմել իմ կեանքի բոլոր հանգամանքները ու դէպքերը (յատկապէս այն օրից, որ ես վերադառնալ էի Սպահան) և հետաքրքրուեց թէ սովոր էին հօրս ամենամտերիմ բարեկամները ու ծանօթները, և թէ իմ կասկածները ինչ եղբակացութեան էին առաջնորդել ինձ: Մի խօսքով՝ նա հետեւեց իմ ասածներին այն մանրազննութեամբ, որ անում է մի բժիշկ, երբ աշխատում է քննել մի բարդ հիւանդութիւն:

Ինձնից լսած պատմութիւնների վրայ լաւ խորհելուց յետոյ նա խնդրեց ինձնից ցոյց տալ իրան այն տեղերը, ուր բնակուել էր հայրս: Մայրս այդ առաւօտ բաղնիք գնացած լինելով, ինձ յաջողուեց նրանից ծածուկ գուշակին տանել նրա սենեակը, ուր նա՝ գուշակը խնդրեց ինձնից մենակ թողնել իրան, որպէսզի ինքը կարողանար մի գաղափար կազմել տեղերի դիրքի մասին: Ամբողջ քառօրոք ժամ նա մնաց այնտեղ, և երբ գուրս եկաւ, առաջարկեց ինձ մեր տանը հաւաքել հօրս բոլոր մտերիներին, նաև նրանց, որոնք յաճախ եկել էին մեր տունը, և ասաց որ երբ նրանք կը ժողովուեն, ինքը կը գայ ու կը սկսէ գուշակութեան գործը:

Առանց մօրս մի խօսք ասելու գուշակի մասին՝ ես խնդրեցի նրանից, որ միւս առաւօտեան համար մեր տուն հրաւիրէր իր ամենամտերիմ բարեկամներին, նրան խաբելով, որ իբրեւ թէ ես դիտաւորութիւն ունիմ նրանց ճաշ տալու: Ես ինքս էլ անձամբ հրաւիրեցի ախուշդին—իմ ուսուցչին, Ալի Մոհամէդ դանապանին, հօրաքրոջս որդուն, մօրեղբօրս և միքանի ուրիշներին, որոնք ազատ մուտք ունէին մեր տունը գալու:

Ճիշդ ժամանակին նրանք եկան: Նրանց հիւրասիրելուց յետոյ ես յայտնեցի թէ ինչ վիճակի մէջ էի և ասացի որ ես իրանց հրաւիրել էի վկայ լինելու գուշակի ջանքերին գանելու:

այն տեղը, ուր հայրս սովորաբար պահում էր իր փողը, որի գոյութեան մասին հօրս ճանաչող մարդը չէր կարող կասկածել: Նրանց հետ խօսելիս՝ ես ուշադրութեամբ նայեցի ամեն մէկի երեսին այն յուսով որ տեսնէի մէկի կամ միւսի վրայ կասկածներս հաստատող նշաններ, բայց կարծես թէ ամեն մէկը արդէն պատրաստ էր իրան չմատնելու, ամենքն էլ իրանց դէմքերի վրայ ցոյց տուին աներկբայելի անմեղութիւն:

Վերջապէս դէրվիշ Թիզ Նէֆան (այդ էր գուշակի անունը) և մի ուրիշ մարդ, որի ձեռքումը կար թաշկինակի մէջ փաթաթած մի-ինչ որ բան, ներս մտան: Ես իսկոյն պատուիրեցի մեր անդէրունում գտնուող կանանց, որ քողով ծածկէին իրանց (որովհետեւ հաւանականօրէն տղամարդիկը կ'այցեկէին նրանց), և խնդրեցի դէրվիշից սկսել իր գործը:

Ամենից առաջ նա խորին ուշադրութեամբ նայեց ամեն մէկի երեսին, բայց նա իր օձային աչքերը տնկեց յատկապէս ախունդի վրայ, որը չկարողանալով դիմանալ նրա հայեացքին՝ բացազանչեց՝ «Ալլահ իլ Ալլահ», ձեռքը քսեց երեսին և մօրուքին և չար ոգուն իրանից հեռու պահելու համար՝ նախ մէկ ուսի վրայ փչեց, յետոյ միւսի: Նրա հաշուին միւսները մի քիչ զուարճացան. բայց նա կարծես թէ չէր կարողանում հանդուրժել որեւէ մէկի կատակին:

Դէրվիշը կանչեց իր հետ եկած մարդուն, որը թաշկինակից հանեց պղնձէ գաւաթ, որի վրայ քանդակուած էր զորանից վկայութիւններ՝ գոյութեան յանցանքի և որբին իր իրաւունքից զրկելու մեղքի մասին: Նա շատ սակաւախօս էր և միայն արտասանելով «յանուն ամենատես և ամենագէտ Ալլահին»՝ գաւաթը դրեց յատակի վրայ, շատ յարգանքով վերաբերուելով դէպի նրան թէ նրա հետ խօսելիս և թէ դիպչելիս: Դառնալով նայողներին՝ նա ասաց. «Դնշալլահ, այս գաւաթը իսկոյն կ'առաջնորդի մեզ դէպի այն տեղը՝ ուր հանգուցեալ քէրբէյ Հասանի (Ալլահը ողորմի նրան) փողը պահուած է կամ պահուած էր:

Ամենքն էլ նայեցին միմեանց երեսին՝ ոմանք հաւատալով, ոմանք էլ չհաւատալով նրան: Նա կռացաւ դէպի գաւաթը և իր մատներով մեղմօրէն խփելով և հրելով նրան՝ մղեց առաջ՝ շարունակ բացազանչելով. «Տեսէք, տեսէք ինչ ճանապարհով է սա գնում. տեսէք, ոչ մի բան չէ կարող կանգնացնել սրան. տեսէք, ինչ որ անեմ, էլի կը գնայ ու կը գնայ. մաշալլահ, մաշալլահ»:

Գաւաթն առաջ գնաց, գուշակն էլ նրա ետևից, մենք էլ գուշակի ետևից, մինչև նա հոսաւ անդէրունի դուռը, որը մենք

զարկեցինք մտնելու համար: Մի քիչ բանակցութիւնից յետոյ դուռը բացուեց, և մենք մտանք ներս, ուր հաւաքուած էին մի մեծ խումբ կանայք (որոնց մի քանիսը անհոգութեամբ էին ծածկել իրանց), որոնք անհամբեր սպասում էին տեսնելու թէ ինչ մեծ գործ պիտի կատարէր զարմանալի ու խորհրդաւոր գաւաթը:

— Զանապարհ տուէք, ասաց դէրվիշն ձյն կանանց՝ որոնք կանգնել էին նրա ճանապարհի վրայ, և ինքը մղեց բաժակը գէպի բակի մի անկիւնը, որի վրայ նայում էին սենեակի պատուհանները:— Զանապարհ տուէք, կրկնեց նա, ոչ մի բան չէ կարող կանգնացնել իմ ուղեցոյցին:

Կանանցից մէկը (մայրս էր նա, ես ճանաչեցի նրան) մի քանի անգամ կտրեց նրա ճանապարհը, մինչև որ գուշակը պարտաւորուեց զգուշացնելով նրան՝ խստութեամբ նկատել

— Դու չիս տեսնում որ մենք Ալլահի համար ենք գործում. որչափ էլ մարդ ուզում է՝ թող չարութիւն անի, այնուամենայնիւ արդարադատութիւն պիտի լինի:

Ի վերջոյ նա հասաւ վերոյիշեալ անկիւնը, որտեղ պարզ երևաց, որ հողը մի օր կամ մի քանի ժամ առաջ շարժուել էր. այնտեղ նա կանգ առաւ:

— Բիսմիլլահ (յանուն Ալլահի), ասաց նա, բոլորդ էլ կանգնեցէք շուրջս և տեսէ՛ք՝ ես ինչ եմ անում: Յետոյ իր դաշոյնով նա փորեց դետինը, ձեռքով հողը դուրս տուեց, և այնտեղ գտաւ մի կճուճի կտորներ, որոնց մօտ երևացող նշաններից յայտնուում էր որ մի ուրիշ կճուճ էլ էր եղել այնտեղ:

— Այստեղ, ասաց դէրվիշը, այստեղ էր փողը. բայց այժմ այստեղ չէ՛: Այս ասելով՝ նա վերցրեց գաւաթը և ձեռքերեց, իբր թէ փայփայում էր նրան՝ «Իմ փոքրիկ հոգիս, իմ փոքրիկ քեռի» կոչելով նրան:

Ամենքն էլ ապշեցին, զարմացան ու բացազանչեցին ա՛ջաբ (զարմանալի) և կուղ դէրվիշի վրայնայեցին որպէս մի գերբընական էակի վրայ: Մենակ Ալի Մոհամէդն էր որ չզարմացաւ, որովհետեւ նա այդպիսի յայտնութիւններ շատ էր լսել ու տեսել: Նա իսկոյն գուշակեց.

— Բայց ձեր է փողը. դու մեզ ցոյց տուիր որսի տեղը, բայց ուզում ենք որ մեզ համար բռնես որսին: Այո, դու պիտի մեզ ցոյց տաս փողը կամ գողը, կամ թէ չէ՝ մենակ փողը առանց գողի. այդ ենք ուզում մենք:

— Նաւա՛շ, եւաւա՛շ (կամաց, կամաց), բարեկամ, ասաց դէրվիշը դժնապանին. այդպէս շուտով թռիչք մի գործիւր յանցանքից գէպի յանցաւորը: Ամեն մի հիւանդութեան համար էլ

դեղ կայ, թէև շատ անգամ պատահում է որ դեղը բաւականա-
ռւշ է ցոյց տալիս իր արդիւնքը:

Նա յետոյ իր աչքերը դարձրեց խմբի վրայ՝ արագ-արագ
պսպղացնելով նրանց և ասաց.

— Ես վստահ եմ որ ձեզնից ամեն մէկը կ'ուրախանայ որ
իւր կասկածանքները փարատուեն, և կ'ընդունին ինչ որ ես կ'ա-
ռաջարկեմ. գործողութիւնը շատ պարզ է և շուտով կը վերջա-
նայ:

— Ալբաթէ՛, բա՛լի (անշուշտ, այո՛), ինչէ՞ հարձ իստ
(այդ ինչ խօսք է), ասացին բոլորը և խնդրեցին դէրվիշից
շարունակել իր գործը:

Նա կրկին կանչեց իր ծառային, որը իր գրպանից հանեց
մի փոքրիկ քսակ և տուեց իրան. ինքն էլ կրկին վերցնելով
իւր պղնձէ գաւաթը՝ ասաց.

— Այս քսակի մէջ մի քիչ հին բրինձ կայ. սրանից ես
մի-մի գդալ կ'ածեմ ձեր բերանը, դուք իսկոյն կը ծամէք: Ո՛վ
չէ կարող ծամել, փշրել, թող նա զգուշանայ, որովհետեւ էրլիսը
նրա մօտն է:

— Այս ասելով՝ նա մեզ բոլորիս կարգով նստացրեց, աս-
մեն-մէկիս բերանը մի-մի գդալ բրինձ ածեց, և մենք սկսեցինք
ծամել. Իհարկէ, այդ բանին չենթարկուեցի ես, որովհե-
տեւ գանգատաւոր էի: Մայրս էլ չուզեց բրինձ ուտողների
կարգն անցնել, բայց խորամանկ դէրվիշը ստիպեց նրան ես-
թարկուել նոյն ըննութեանը՝ ասելով.

— Այն փողը որ մենք ուզում ենք գտնել, քոնը չէ, այլ քո
որդունն է: Ա՛յլ բան կը լինէր եթէ նրանը չլինէր:

Մայրս էլ ընդունեց, թէև դժկամութեամբ, բրինձ ծամել:
Բոլորն էլ շարունակեցին ծամել՝ ոմանք կատակ ընդունելով,
ոմանք էլ այդ բանը իրանց նետարդերի համար խիստ փորձ
համարելով: Ո՛վ որ բրինձը ծամում, փշրում էր, դէրվիշին կան-
չում էր և ցոյց էր տալիս նրան իր ծամածը: Վերջապէս, բո-
լորն էլ հաստատեցին իրանց անմեղութիւնը, բացի ախունդից
և մօրիցս: Առաջինը, որի երեսը կեղծ ուրախութիւն էր ար-
տայայտում, շարունակեց երկար ծամել բրինձը և վերջը տըր-
տընջալով ասաց դէրվիշին.

— Դու ինչո՞ւ համար ես ստիպում մեզ ծամել այս կոշտ
բրինձը: Ես ծերացել եմ, ատամ չունիմ, անկարելի է որ ես
կարողանամ փշրել:

Եւ նա դուրս թափեց բրինձը իւր բերանից: Մայրս էլ
նոյն գանգատը, նոյն բանն արեց: Տիրեց միւլուութիւն, որ մեզ
կարծես թէ պարտաւորացրեց սովորականից աւելի մեծ ուշա-

դրութեամբ նայել այդ երկուսին: Այդ լռութիւնը շարունակուեց, մինչև որ մօրս համակրող մի պառաւ կին մէջ մտաւ և սասաց.

— Այս ի՞նչ երեխայական խաղ է. ո՞վ էր տեսել որ մի սրղիւ անբան անարգի, անպատուի մօրը և իր ծերունի ուսուցչին: Ամօթ, ամօթ, եկէք զնանք. գուցէ գողը հէնց ինքն է: Պառաւի այս խօսքերի վրայ դէրվիշն սասաց.

— Միթէ մենք յիմարներ են, էշեր ենք, որ այդպէս էք խօսում մեզ հետ: Մենք հիմա մի կողմ կը դնենք թէ այս անկիւնում փող կամ կամ չկար, աշխարհում գողեր կան թէ չկան. բայց այս մարդն ու այս կինը (մատնացոյց անելով մօրս և ախտնդին) չարին այն՝ ինչ որ արին միւսները: Թերևս նրանք ճշմարիտ են ասում որ իրանք ծեր են և հետևապէս չեն կարողանում փշրել բրինձը. ո՞չոք չասաց որ նրանք են գողացել փողը. այդ բանն իրանք ամենից լաւ գիտեն, ասաց նա՝ լաւ նայելով նրանց երեսին. բայց այն մեծահոգակ գուշակը— Հէղարմանը, նա՝ որ ճշմարտապէս կոչւում էր Մեծ Արջի սրտակից բարեկամը և Սատուրն մոլորակի հաւատարիմը, նա՝ որ կարող է գուշակել ի՞նչ որ մարդ մտածել է, մտածում է և դեռ պիտի մտածի, այո, նա ասել է, որ «բրնձով քննութիւն անելը երկչոտների մէջ ամենալաւ միջոցն է փորձելու մարդու հաւատարմութիւնը»: Արդ, բարեկամներ, որքան ես կարողացայ նկատել, ձեզնից ո՞չ մէկը «առիւծ սպանող մարդ» չէ. դուք բոլորդ էլ մի փոքրիկ բանից վախենում էք: Եթէ դուք չէք հաւատում ինձ, ես մի ուրիշ աւելի հեշտ փորձ կ'առաջարկեմ, մի փորձ՝ որ ո՞չոքի վտանգի չէ հնթարկում և այնպէս դիւթում է մարդու, որ գողը իր կամքով առաջ է գալիս, իր գութութիւնը յայտնում և յետ տալով իր գողացած փողը՝ հանդրատանում, ազատում է իր խղճի խայթից: Ես այժմ առաջարկում եմ խափ ըրիզին (հող դիզելը): Այստեղ, այս անկիւնում ես հող կը դիզեմ և այս գիշեր այնքան ջերմեռանդութեամբ կ'աղօթեմ, որ Ալլահի օրհնութեամբ հաջին (մատնացոյց անելով ինձ) վաղը հէնց այս ժամին իր փողը կը գտնի հէնց այստեղում թաղուած: Ով հետաքրքիր է տեսնելու, թող վաղը գայ այստեղ, և եթէ ասածս չկատարուի, մօրուքիցս մի միտխալ կը կտրեմ ու կը տամ նրան:

Այս խօսքերից յետոյ նա սկսեց հող դիզել անկիւնում. լծամաշաւիները զարմանալով՝ վիճաբանում էի իրանց տեսածի ու լսածի վրայ՝ ոմանք ինձ ու դէրվիշին չար ոգու գաւազներ համարելով, ոմանք էլ մօրս ու ախտնդին: Խուսման ասպա ցրուեց. նրանցից շատերը խոստացան վերադառնալ միւս

առաւօտը որոշեալ ժամին ականատես լինելու, թէ դիզուած հողի տակից փողը դուրս էր գալու, թէ՛ չէ:

Գլ. Ծա.

Գուշակին յաջողում է գողացուած փողը գտնել: — Թէ ինչ որոշում է անում Հաջի Բաբան:

Պիտի խոստովանուեմ, որ ես սկսեցի յոյսս կտրել. ինձ թւում էր որ փողս չէր գտնուելու: Ճիշտ է, դէրվիշն իր խելքով ու հնարադիտութեամբ կարողացաւ իմանալ, որ վերջապէս հօրս տնում փող եղել էր այս ինչ անկիւնում թաղուած, և նրան յաջողուեց տգեղ կասկածներ յարուցանել սրտումս երկու անձերի վրայ, որոնց կասկածելը մեղք էի համարում, սակայն չէի կարողանում հաւատալ, որ բացի այդքանն անելուց՝ նա ուրիշ բան էլ էր կարող անել:

Ինչեւէ, միւս առաւօտը նա, Ալի Մոհամէդը և միքանիսը այն մարդկանցից, որոնք ներկայ էին եղել նախորդ օրը, կըրկին եկան մեր տունը. բայց ախուշը չերեաց. մայրս էլ տանից դուրս էր գնացել մի հիւանդ բարեկամուհու այցելելու պատրուակով: Մենք խմբով գնացինք այն անկիւնը որտեղ դէրվիշը հող էր դիզել և որտեղ նա մի սուրբ կոչ անելուց յետոյ խորհրդաւոր յարգանքով մօտեցաւ հողին:

—Այժմ մենք կը տեսնենք, ասաց նա, թէ արդեօք ջիններն ու փէրիները այս գիշեր գործէ՞ն են այստեղ, թէ՛ չէ:

Նւ գոչելով քիսմիլլա՝ հա իր դաշոյնով փորեց հողը, որի մի մասը յետ քաշելուց յետոյ մի քար երեաց: Նա հանեց այդ քարը, և բոլորը շատ զարմացան, ես էլ ի հարկէ շատ ուրախացայ, երբ այնտեղ երեաց մի կտաւէ լիքը քսակ:

—Ո՛վ հոգիս, ո՛վ սիրտս, գոչեց դէրվիշը՝ վերցնելով քսակը. դուք տեսնում էք, դարձաւ նա դէպի մեզ, որ դէրվիշ Թիզ Նէգան այն մարդը չէ որ իր մօրուքի մէկ մազն անդամ կորցնի: Ահա քո փողը, — ասաց նա՝ քսակը տալով ինձ. — գնա և փառք տուր Ալլահին որ իմ ձեռքն ընկար և չմոռանաս իմ հաղէսայն (իմ միջնորդէքը, յանձնարարչէքը):

Բոլորն էլ հաւաքուեցին շուրջս, և ես բաց արի քսակի բերանը, որ կապած ու կնքուած էր հօրս կնիքով: Նրանք անհամբեր էին տեսնելու թէ ինչքան էր փողը, բայց սիրտս սաստիկ տխրեց երբ քսակի մէջ ոսկի գտնելու փոխարէն արծաթ

դրամ գտայ: Հինգ հարիւր ըրալ էր դա. դրանից ես համարեցի յիսուներ և ընծայեցի հնարագէտ գուշակին:

— Ստացիր այս յիսուն ըրալը, ասացի ես. յաջողութիւն եմ ցանկանում տանդ: Եթէ ես հարուստ լինէի, դրանից աւելին կը տայի, ուրեմն ընդունիր, թէպէտ դա մի փոքրիկ մասն է այն գումարի որ հայրս հաւաքել է: Ընդունիր նաև անկեղծ շնորհակալութիւնս. կրկին յաջողութիւն եմ ցանկանում տանդ:

Դէրվիշը խիստ գոհ եղաւ իմ վարմունքից և փողն ստանալով՝ մնաս բարով ասաց ու գնաց: Միւսներն էլ գնացին, և ինձ մօտ մնաց միայն Ալի Մոհամէդ դոնապանը:

— Մի փառաւոր գործ կատարեցինք այս առաւօտ, ասաց նա. ես չասնցի որ գուշակները հրաշքներ են գործում:

— Բալի, ասացի ես, շատ զարմանալի էր. ես չէի կարծում որ դէրվիշը այդքանը կարող էր անել:

Ագահութիւնից դրդուած և միևնոյն ժամանակ քսակիս արծաթի փայլով աչքերս շլացած, ես սկսեցի տրտնջալ թէ ինչու այդքան քիչ փող էր ձեռքս ընկել, և ասացի դոնապանին:

— Գիտես ինչ. ես պիտի բողոքեմ դատաւորին, եթէ ես իրաւունք ունիմ իւրացնելու հինգ հարիւր ըրալը, իրաւունք ունիմ նաև սեփականացնելու հօրս բոլոր ստացուածքը, և դու պիտի ընդունես, որ այս փողը նրա խնայած փողի մի չնչին մասն է կազմում:

— Բարեկամ, ասաց նա, ականջ դիր ծերունուս խօսքերին, ինչ որ արդէն ձեռքդ է ընկել, պի՛նդ պահիր և դրանով բաւականացիր: Եթէ դատաւորի մօտ գնաս, ունեցածդ էլ ձեռքիցդ կը տաս ու ի՛նչ չես շահի: Հաստատ իմացիր որ նա քեզ լաւ կը քամի, հինգ հարիւր ըրալդ ձեռքիցդ կ'առնի, հինգ հարիւր ըրալ էլ քո հակառակորդներից կ'առնի և վերջն էլ կ'ասի. «Գնացէ՛ք խաղաղութեամբ և քաղաքի խաղաղութիւնը մի վրդովէ՛ք ձեր վիճաբանութիւններով»: Աշխարհում այսքան ապրելուց յետոյ միթէ՛ դու չես լսել այն առածը թէ՛ «ամեն մարդու ատամները հարուստ (առնում) են թթուններից, բացի դատաւորինը՝ որ հարուստ են քաղցրաւենիքից»:

Քիչ մտածելուց յետոյ ես վճռեցի դոնապանի խորհրդի համաձայն վարուել, որովհետեւ պարզ էր, որ դատաւորին դիմելիս ես պիտի բողոքէի մօրս ու ախունդի դէմ և իհարկէ՛ նրանց դէմ դանգատուելով՝ այնքան թշնամիներ կը ստեղծէի որ ես կը քարկոծուէի մի բան շահելու փոխարէն:

— Ինչ որ իմ սեփականութիւնն է, ասացի ես, կը ծախեմ ու կը գնամ այս քաղաքից այլևս չվերադառնալու, միայն

Թէ բարեյաջող պայմաններում լինեմ: Սպահանք այլևս չէ տեսնելու ինձ. ես կը գնամ և միայն կը վերադառնամ այն ժամանակ՝ երբ մի նշանաւոր մարդ կը լինեմ, իշխանաւոր կը լինեմ: Ալի Մոհամէդը ինձ գովեց արածս որոշումների համար, մանաւանդ որ ինքն էլ ցանկանում էր որ ես շուտով կատարէի որոշումս, որովհետև նա մի սափրիչ որդի ունէր, որին նա ցանկանում էր յաջող պարագաների մէջ դնել, այսինքն՝ մի խանութ բանալ նրա համար: Իհարկէ՝ նա շատ ցանկանում էր իր որդուն հաստատել այն խանութում, ուր հայրս այնքան յաջողութեամբ բարգաւաճել էր:

Նա ինձ առաջարկեց իրան ծախելու. հօրս խանութը, գործիքները և այլն: Ես համաձայնեցի, և կանչելով մի յայտնի սափրիչ՝ գնահատել տուինք խանութը, և ես ծախեցի՝ ազատուելով հոգանքիս մէկիցը:

Գալով մեր տանն ու կարասիքին, չնայած ես շատ նեղացած էի մօրիցս, այնուամենայնիւ բարի անուն շահելու դիտաւորութեամբ, որը շատ հարկաւոր էր ինձ, ես վճռեցի թոյլ տալ նրան իւրացնել նրանց, միայն թէ ինձ հետ պահել թամասորները (տան հաստատման թղթերը):

Ամեն բան որոշելուց յետոյ ես սկսեցի գործել: Ալի Մոհամէդից ստացայ հինգ հարիւր պիաստրը—հօրս խանութի և գործիքների գինը: Նա էլ երևի բաւական փող էր դիզել. ամեն մարդ ընդունեց որ նա իր փողը շատ լաւ նպատակի ծառայեցրեց. ամենքն էլ ասում էին որ խանութը լաւ տեղ ընկած լինելով՝ շատ շահաւէտ պիտի լինէր գնողի համար: Ես այժմ հարիւր ու տասը թուման արծաթ փող ունէի, որը ծոցումս պահելու համար փոխեցի ոսկի դրամի հետ: Փողիս մի մասը յատկացրի ինձ համար շորեր գնելու և մի մասն էլ մի ջորի և նրան վերաբերելի իրեր գնելու: Ես աւելի յարմար համարեցի ջորի գնել նրա համար, որ երկար մտածելուց յետոյ վճռել էի այլևս չերևալ սահիբ շէմշիբի (սրի տէր) բնաւորութեամբ, ինչպէս մինչև հիմա երևացել էի, այլ դուրս գալ որպէս սահիբ ղալամ (գրչի տէր):

«Այժմ, մտածեցի ես, պիտի դէն դնեմ սուրս, ատրճանակս ու հրացանս. դրանց գործածութիւնը այլևս անվայելուչ է ինձ համար: Գլխարկիս կատարը դէպի ներս ծալելը, թեք գլխարկ դնելը, ականջներիս ետևը զուլֆեր պահելը պիտի իսպառ վերջ տամ և դրանց փոխարէն մէջքիս պիտի կապեմ մի շալ գօտի՝ որ ինձ մի նոր բնաւորութիւն կը տայ, և զուլֆերս կտրելով՝ ես ցոյց կը տամ մարդկանց որ հրաժարուել եմ աշխարհից և իր ունայնութիւններիցը: Դաշոյնի տեղ ես մի փաթոյթ թուղթ

կը խրեմ գօտուս մէջ և փամփշտակալի փոխարէն՝ մի ղորան կը կախեմ ուսիցս: Բացի սրանից, ես այլևս ոչ ոտներիս մատների վրայ ման կը գամ, ոչ մարմինս ծռւոնելով կամ շօրօր տալով կը քայլեմ, ոչ գօտիս այնքան պինդ կը քաշեմ որ մէջքս բարակ երևայ, ոչ ման գալիս թեքս կը ճօճեմ, ոչ էլ վերջապէս երբեք ղաշանգ (սիրուն, վայելչակազմ) երևալու ձև ու շարժուածք կը տամ մարմնիս, ինչպէս անում էի երբ դահճապետի օգնականի պաշտօնի մէջ էի: Ո՛չ, այսուհետեւ ես ման կը գամ մէջքս մի քիչ կռացած, գլուխս կախ արած, աչքերս միշտ դէպի գետին դարձրած, ձեռներս կամ գօտուս մէջ խրած, կամ դէպի գետին կախ արած, ոտքերս իրար յիտեից քաշ տալով, այնպէս որ քայլուածքս ամենեւին սիզածեմ չերևայ»:

«Ամեն բանի մէջ, շարունակեցի մտածել ես, մարդուս արտաքինը մեծ նշանակութիւն ունի. բաւական է որ մարդիկ տեսնեն որ երեսս միշտ թախծապատ է և գլխիս փաթաթուած է մի շալ, ինչ յիմար խօսք էլ որ բերնիցս դուրս գայ, նրանք ինձ իմաստուն կը համարեն, մանաւանդ թէ խօսքերս միշտ խոր հոգեղներով և «Ալլահ իլ Ալլահ» կամ «Ալլահ հօ արքար»-ով լինին: Եթէ ես հանդիպեմ մի գիտնականի և պարտաւորուեմ պահպանել բնաւորութիւնս, ես իմաստունի դէմք կը ստանամ, շրթունքներս պինդ իրար վրայ կը դնեմ և խիստ գաղտնի կը պահեմ մտածմունքներս: Ես հօ կարդալ ու գրել էլ կարող եմ, և ինչպէս վճռել եմ, այժմեանից կը սկսեմ շարունակ վարժութիւններ անել, այնպէս որ շատ շուտով գեղեցիկ ձեռագիր կ'ունենամ: Բաւական է որ ես կարողանամ արտագրել ղորանը, այդ ինձ արդէն աշխարհային փառքի ու պատուի կ'արժանացնի»:

Այսպիսի մտածմունքներով ես անցկացրի օրերս, մինչև որ հասաւ այն ժամանակը, երբ հարկաւոր եղաւ վճռել թէ դէպի ո՞ր կողմը պիտի ճանապարհուեմ: Դրութեանս նայելով, հարկաւոր էր ինձ աշխատել օգտուելու այն տպաւորութիւնից, որ ես թողել էի Ղոււմ քաղաքում մուշտահիդի և նրա աշակերտների վրայ: «Միակ մարդը, մտածեցի ես, որ կարող է ինձ օգնել՝ դա մուշտահիդն է. գուցէ նա ինձ կը յանձնարարի մեր մուլաներից մէկին, որը ինձ կ'ընդունի որպէս գրագիր կամ սպասաւոր և կը սովորեցնի ինձ թէ ինչ շաւղով պիտի ընթանամ»:

Մուշտահիդի միջոցով ես ազատուել էի. սակայն Ղոււմից ես այնպէս յանկարծ էի հեռացել, որ չէի կարողացել երախտագիտական պարտքս վճարել նրան: «Ես պարտական եմ նրան, մտածեցի ես. ես մի փէշքաշ պիտի տանեմ նրա համար»:

ես չպիտի թոյլ տամ որ նա ասի կամ մտածի թէ ես ապերախտ մարդ եմ եղել, մոռացել եմ իր բարութիւնը»:

Բայց հարց էր թէ ինչ բան փէշքաշ տանել նրա համար: Շատ մտածելուց յետոյ ես դարձեալ վճռեցի մի ղալիչա(փոքրիկ գորգ) տանել: Գորգն իսկոյն գնեցի և միևնոյն ժամանակ շատ ուրախացայ որ կարող էի այն չորստակ ծալել և ձգել ջորուս համետի վրայ, որպէսզի տեղս փափուկ և հանգիստ լինէր, մինչև հասնէի Ղուս:

Ես գրեթէ վերջացրել էի բոլոր գործերս և այժմ պատրաստ էի ճանապարհուելու: Ես շատ ուրախացայ տեսնելով որ արտաքինով ես նմանում էի մի խիստ, մի մոլեռանդ մոլլայի, թէպէտ ինքս ինձ մոլլա չկոչեցի, այլ թողի որ հանգամանքներն ինձ տային այդ տիտղոսը: Առայժմ, մտածեցի ես, «հաջի» անունը, որ մանկութեանս ժամանակ ինձ տրուել է որպէս սիրական անուն, բաւական օգնում է ինձ պահպանելու իմ նոր բնաւորութիւնը»:

Նախ քան ճանապարհուելու ես պիտի վճարէի մէկ պարտք—հօրս յուղարկաւորութեան ծախքը, որի հատուցանելը, ճիշտն ասած, մեծ ծանրութիւն էի զգում, քանի որ ես բաւական խաբուել էի հօրս ինձ թողած ժառանգութեան վերաբերմամբ: Ես մի քանի անգամներ ծրագիր կազմեցի գաղտնի կերպով ծլկուել Սպահանից, սակայն լաւագոյն զգացումներս թոյլ չտուին ինձ այդ բանն անելու, և մտածելով որ այդպիսի վարմունքը լիազօր իրաւունք պիտի տար մարդկանց ինձ սկրտելու փէղար սուխտա^{*)} (հայրը այրուած) անունով, ուստի խոհեմութիւն համարեցի իսկոյն գնալ հօրս յուղարկաւորութեան ժամանակ դեր կատարող մոլլաների, լացկանների և մորդէշուրների (մեռել լողացնող) մօտ, որոնց հատուցի իրանց իրաւունքները:

Գլ. Ծք.

Հաջի Բաբան լքանում է իր մօրը եւ մի նշանաւոր կրօնաւորի մօտ դրազիր է դառնում.

Ես բաժանուեցի մօրիցս առանց շատ տխրելու: Նա էլ այնքան տխրութիւն չէր տալիս, որ չարտայայտեց: Նա իր ծրագրերներն ու-

*) Հայհոյանքների՝ ամենատոբոբական բառերն են, որ միշտ պարսկերէնով ծաղրին են: «Փէղար սուխտա» նշանակում է մէկը, որի հայրը այրուած է յուսիսեանական կրակի մէջ:

նէր, ես իմս, ի նկատի ունենալով թէ մեր վերաբերմունքները ինչպէս էին դէպի միմեանց, աւելի լաւ էր որ բաժանուէինք միմեանցից, հեռու մնայինք և չխանգարէինք միմեանց:

Արեւածագին ես հեծայ ջորիս և դեռ կէսօր չեղած՝ Սպահանից բաւական հեռացած՝ Ղոււմ տանող ճանապարհի վրայ էի: Ես շատ քիչ ժամանակ վատնեցի ճանապարհին, չնայած որ ինձ համար մեծ ուրախութիւն կը լինէր քիչ մնալ Քաշանում: Իններորդ օրը, վերջապէս, ես մի անգամ ևս տեսայ Ֆաթիմէի գերեզմանի ոսկեպատ գմբէթը:

Հասայ Ղոււմ, ուր մի փոքրիկ քարվանսարայում իջնելով՝ ջորուս լաւ խնամատարութեան յանձնեցի և ապա վերցնելով ղալիչան՝ գնացի մուշտահիդի տունը: Նրա տան դուռը բաց էր ամենքի համար. ամեն մարդ կարող էր ազատ մուտ գործել այնտեղ, որովհետեւ նա չէր պահում մի խումբ ծառաներ, որ սարսափ ազդէին օտարականի վրայ և չթողնէին նրան ներս մտնել, ինչպէս անում են Պարսկաստանում շատ աստիճանաւորների դռներին: Մուտքում թողնելով ղալիչան և կօշիկներս հանելով՝ մտայ նրա սենեակը, ուր մի անկիւնում նստած էր սուրբ մարդը: Նա իսկոյն ճանաչեց ինձ և սիրալիր ընդունելութիւն տալով՝ հրաւիրեց նստել: Պատշաճ մեծահասակներ մատուցանելով նրան՝ ես նստայ թաղիքի հէնց եզրին:

Նա խնդրեց ինձ պատմել իմ արկածները սկսած այն օրից՝ որ ես հեռացել էի Ղոււմից, որովհետեւ, ինչպէս ինքը խոստովանուեց, նա շատ հետաքրքրուում էր իմ կեանքով: Ես էլ նախ յայտնելով նրան իմ լուրին երախտագիտութիւնը իր բարեխօսութեան համար՝ պատմեցի ամեն ինչ որ պատահել էր ինձ: Ես նաև յայտնեցի նրան թէ ինչ սուրբ կոչման էի ձեռնադրուում, և թէ ինչպէս էի ցանկանում սուրբ կեանք վարելու և խնդրեցի նրանից օգնել ինձ գտնելու մի գործ, որով կարողանայի ցոյց տալ իմ խանդն ու եռանդը յօգուտ ճշմարիտ հաւատի:

Մի երկու ըոպէ մտածելուց յետոյ նա ասաց, որ հէնց այդ առաւօտը ինքը մի նամակ էր ստացել Թէհրանի գլխաւոր «օրէնքի մարդկանցից» մէկից—մովլա Նադանից, որ շատ կարիք ունի մի մարդու, որը կարողանայ նրա համար կէս-գրադրի, կէս-սպասաւորի պաշտօն կատարել: Նա, մի խօսքով, ուզում է այնպէս մէկը, որ կարողանայ ապագայում մովլա դառնալ, և որին նա ցանկանում է հէնց այժմեանից կրթել ու պատրաստել այդ կոչման համար:

Սիրտս սկսեց թրթռալ ուրախութիւնից. որովհետեւ ինքըս էլ ճիշտ այդպէս մի պաշտօն էի ուզում: Են գիտեմ, մը-

տածեցի ես, թէ ինչպէս մի կատարեալ մոլլա պիտի դառնամ, բաւական է որ ես կէս մոլլա դառնամ, յետոյ, ամբողջ մոլլա դառնալը իմ գործն է»:

Ես իսկոյն աղաչեցի մուշտահիդին որ բարեհաճէր իմ մասին գրել Թէհրանի մուշտահիդին: Նա խոստացաւ և անմիջապէս իր ձեռքով մի տոմս գրելով մոլլա Նադանին՝ կնքեց և իր մկրատով նրան պատշած ձեռ տալով փաթոյթ արեց և յաճձնեց ինձ՝ ասելով:

— Իսկոյն գնա Թէհրան. անկասկած դեռ ոչոք ստանձնած չի լինիլ այդ պաշտօնը, և մոլլա Նադանը ամենայն ուրախութեամբ քեզ կ'ընդունի:

Ես այնքան ուրախացայ, հրճուեցի և ինձ երջանիկ զգացի, որ համբուրեցի բարի մարդու ձեռքն ու փէշը, և հազար ու մէկ խօսքերով շնորհակալութիւն յայտնեցի նրան իր արած բարեբարութիւններէ համար:

— Ես միայն մէկ շնորհ ունիմ ձեզանից՝ իմ տիրոջից խնդրելու, ասացի ես, այն է՝ որ տէրս հաճի ընդունել մի փէշքաշ իր ամենախոնարհ ստրուկից: Փէշքաշը մի աղօթելու դալիչն է, և եթէ տէրս ինձ այնքան կը պատուի որ կ'ընդունի և գործ կ'ածի դրան, ես պիտի յուսամ, որ նա երբեմն իր աղօթքներում կը յիշի խոնարհ ընծայաբերին:

— Յաջողութիւն եմ ցանկանում տանդ, հաջի, ասաց նա շատ քաղցրութեամբ: Ես շնորհակալ եմ որ դուք ինձ յիշել էք թէպէտ ոչ մի առիթ չկար, հարկ չկար որ զալիչան ինձ համար փէշքաշ բերէք: Բարի մուսուլման եղէք, հաջի, միշտ կուռեցէք անհաւատների դէմ, քարկոծեցէք սուֆիներին, այդ, այո, այդ է միակ բանը որ ես իմ կողմից խնդրում եմ ձեզնից, և հաւաստի եղէք որ այդպէս անելով՝ դուք միշտ իմ յիշողութեան մէջ կը լինիք:

Ես յետոյ մատուցի զալիչան, որ ինչպէս երևաց, բաւական ուրախացրեց նրան. ապա թոյլտուութիւն խնդրելով միւրախաս (ազատ լինելու, գնալու) լինելու՝ վերադարձայ քարվանսարան այն դիտաւորութեամբ՝ որ իսկոյն ճանապարհուէի և որքան կարելի էր՝ շուտ հասնէի Թէհրան: Ես էլ չապասեցի այցելելու իմ զուգի բարեկամներին կամ մի անգամ ևս տեսնելու այն նկուղը, ուր ես ապաստանել էին, այլ իսկոյն հեծայ ջորիս և հէնց այդ գիշերը հասայ Փոլի Դալլաքի քարվանսարան:

Երեկոյ էր, երբ վերջապէս հասայ Թէհրան, և որպէսզի աչքիս չընկնէր այն տեղը, ուր տարաբախտ Զինաբը թաղուել էր, ես շեղուեցի ուղիղ ճանապարհից և մտայ քաղաքը «Նադբինի» դռնով: Բախտաւոր էի որ ինձ չճանաչեցին պահապան-

ները, որոնք, երբ ես դանձապետի ծառայութեան մէջ էի, միշտ կանգնում, յարգանքով ողջունում էին ինձ նրանց մօտենալիս: Սակայն, յիրաւի, զարմանալի չէր որ այն երբեմն աշխոյժ, եռանդուն, խիստ, խրոխտ նասաղչին չճանաչուեց խոնարհ և աննշան մոլլայի զգեստով: Ես ինձ ապահով էի զգում իմ ծրարտումով և համարձակութեամբ անցայ բազարների և փողոցների միջով, ուր մի ժամանակ միայն իմ երեսն էր աչքի ընկնում և ոչ այլինչ: Անցնում, գնում էի ես նոյն տեղերով և երջանիկ էի որ ոչ ոք չէր ճանաչում ինձ:

Ես մարդկանցից հետաքրքրուեցի թէ որտեղ էր գտնուում մոլլա Նադանի տունը. իսկոյն ցոյց տուին, որովհետեւ նա մի նշանաւոր անձնաւորութիւն էր: Ես ուզեցի իսկոյն գնալ նրա մօտ, բայց երկրորդ մտածութեամբ աւելի խելացի համարեցի իջնել մի քարվանսարայում, որ գտնուում էր նրա տան կից, քան օրուայ այդ ժամին (արդէն մութը կոխում էր) ներկայանալ նրան՝ որի վրայ ես նպատակ ունէի, ըստ կարելւոյն, լաւ տրւաւորութիւն թողնել իմ գէժքով և ընդհանուր տեսքով:

Ջորուս լաւ խնամելուց յետոյ ես պառկեցի քնելու: Յոգնածութիւնից շատ անոյշ քնի մէջ ընկայ և չգարթնեցի մինչև առաւօտ, երբ վեր ելնելով՝ գնացի բաղնիք, ուր մօրուքիս ներկը թարմացնելով և ձեռներս ու ոտներս էլ առատ հիւսայով լաւ կարմրացնելով՝ դուրս եկայ: Ինքս ինձ վրայ նայիլով շատ ուրախացայ, որովհետեւ ես դարձել էի ճիշտ այն մարդը, որ շատ հաւանականօրէն յաջողութեան պիտի հանդիպէր և իր փափաղին հասնէր:

Մոլլա Նադանի տունն ընկած էր արքունական մզկիթի մօտ: Տան դրան ճակատը անշուք էր, թէպէտ երբ ներս մտայ, նախագաւիթը շատ մաքուր էր և ջրուած, և մի սննեակ՝ որի դռները բացւում էին այդ բակի մէջ, միայն սուաղած էր, և յատակին փռուած էին մի քանի գորգեր, որոնք ոչ հարստութիւն էին ցոյց տալիս, ոչ էլ չքաւորութիւն: Այստեղ, այս սննեակում նստած էր մի նիհար, հիւանդոտ կրօնաւոր, որը ես կարծեցի տանտէրն էր. բայց ես սխալուեցի, տանտէրը իր անդէրունումն էր, և ինձ ասուեց որ նա շուտով կը գար:

Որպէսզի ցոյց տայի որ ես աւելի քան մի ծառայ մարդ էի, նստեցի և սկսեցի զրոյց անել կրօնաւորի հետ, որը, ինչպէս երևաց իր խօսքերից, մոլլա Նադանի հաշուին ապրող մի մարդ էր: Նա էլ իր կողմից աշխատեց իմանալ թէ ես ինչ գործով էի գնացել, բայց չկարողացաւ, թէպէտ իր տարօրինակ հարցերով նա շատ զարմացրեց ինձ:

— Երևի դուք նոր էր հասնում Թէհրան, հարցրեց նա:

— Բա՛ւրի:

— Հաւանականաբար դուք դիտաւորութիւն ունիք քիչ մնալ Թէհրանում, չէ՞:

— Այդ դեռ հաստատ չէ:

— Մենակ ապրելը տաղտկալի է, ասաց նա քիչ մտածելուց յետոյ, Թէկուզ դա լինի մէկ շաբաթ: Թէհրանը մի քաղաք է, ուր զուարճութեան համար շատ աղբիւրներ կան: Եթէ դուք ունիք այնպիսի մի ծառայութիւն որ ես կարող եմ մատուցանել ձեզ, պատրաստ եմ ամենայն ուրախութեամբ, ըէ՛շաշմամ (աչքիս վրայ):

— Ձեր շնորհը չպակասի, պատասխանեցի ես, ես մոլլա Նադանի հետ գործ ունիմ:

— Ոչինչ տարբերութիւն չկայ իմ և նրա մէջ, ասաց նա: Ես կարող եմ դիւրացնել ձեր գործը, և ինչպիսի իմ ծառայութիւնը կատարելապէս բաւարարացուցիչ կը լինի ձեզ: Բոլոր տեսակներն ու գները մեր ձեռքումն են:

— Ես վաճառական չեմ, ասացի ես:

— Հարկաւոր էլ չէ որ վաճառական լինիք, ասաց նա. բաւական է որ մարդ էք և դարձիք (օտար) էք այստեղ: Որքան ուզում էք՝ կարող էք մնալ այստեղ—մէկ տարի, մէկ ամիս, մէկ շաբաթ, մէկ օր կամ մէկ ժամ, դուք կը տեսնէք որ շատ ախորժելի ժամանակ կ'ունենաք այստեղ:

Ես աւելի և աւելի զարմացայ և շուարեցի նրա խօսքերի վրայ, և հէնց ուղում էի խնդրել նրանից իր միտքը պարզել, երբ մոլլա Նադանը մտաւ սենեակը: Նա մի բարձրահասակ գեղեցիկ մարդ էր, մօտաւորապէս քառասուն տարեկան: Մօրուքը սև էր և փայլում էր թարմ ներկով, աչքերը փայլուն էին և յօնքերն ու արտեանունքները ներկուած էին ծարիրով: Նրա գլուխը ծածկուած էր մի մեծ չալմայով, և մի լայն, ըսպիտակ և գորշ շերտերով խէրոլէ (արաբական վերարկու) ծածկում էր նրա ուսերը: Նա ուժեղ և յաղթանդամ էր. նա աւելի լաւ զինուորի կազմ ունէր, քան կրօնաւորի, սակայն նրա դէմքը չէր արտայայտում զինուորի համարձակութիւնն ու պարզամտութիւնը, այլ ընդհակառակը, խորամանկութիւն և չաւորութիւն, թէև միևնոյն ժամանակ և՛ լատրամադրութիւն:

Նրա ներս մտնելուն պէս ես ոտքի ելայ և նրան մատուցի Ղուամի մուշտահիդի տոմսը և չհամարձակուեցի կրկին նստել: Փաթոյթը (տոմսը) բաց անելիս նա մի-երկու անգամ աչքերը դարձրեց վրաս, կարծես թէ ուզում էր գուշակել թէ ես ինչ գործ կարող էի ունենալ իր հետ, բայց հէնց որ ճա-

նաչեց կնիքը, նրա հրեսի վրայ մի ժպիտ երևաց, և նա հրաւիրեց ինձ նստել:

— Բնորի ես եկել, ասաց նա և յետոյ մի շարք հարցեր տուեց ինձ սուրբ մարդու առողջութեան մասին: Ես էլ ամենայն վստահութեամբ պատասխանեցի նրան, կարծես թէ ես շատ մտերիմ բարեկամ էի եղել նրա հետ: Մեծ ուշադրութեամբ նա կարդաց տոմսը, բայց ոչ մի բառ չարտասանեց նրա բովանդակութիւնից: Յետոյ նա սկսեց արդարացուցիչ խօսքերով ներողութիւն խնդրել ինձնից զայլան չունենալու համար որ ինձ հրաւիրէր:

— Ես ինքս ծխող չեմ, ասաց նա: Մենք որ խստիւ պաշտպանուած ենք մեր ճշմարիտ հաւատը, հեռու ենք այդպիսի զեղխութիւններից և ճշնում, մեղցնում ենք մեր զգայութիւնները: Մեր սուրբ Մարգարէն (օրհնութիւն և խաղաղութիւն նշան) արգելել է իր հետեւողներին որ ամենեւին գործ չածեն արեւեցուցիչ բաներ, և թէպէտ ամբողջ Պարսկաստանում և Տաճկաստանում ծխախոտը առատօրէն գործ է ածւում, այնուամենայնիւ իմացուած է որ դա երբեմն վնասում է մեզ, նսեմացնում է մեր իմացութիւնը. հետեւապէս ես հրաժարուած եմ զայլանից:

Նա այնքան երկար խօսեց իր ծովապահութեան, ապաշխարութեան և ինքնուրացութեան մասին, որ ես սկսեցի մտածել որ բանս լաւ չէր գնալ նրա տնում, այսինքն՝ ես չէի կարող վայելել այն հանգստութիւնն ու ուրախութիւնը որ կրօնաւորը քիչ առաջ խոստացել էր ինձ. բայց երբ ես համեմատեցի նրա առողջ և քիչ կարմիր հրեսը և նրա փարթամ ու կորովի մարմինը իր բեժիմէնի (regimen, ապրելու եղանակ) հետ, ես միթաքեցի ինձ այն յուսով, որ նա չէր կարող լինել այն բարեպաշտ և խստակրօն անձը, որ ինքը իր խօսքերով աշխատում էր ցոյց տալ, և գուցէ ես շուտով կը տեսնէի, թէ ինչպէս իր տան մէջ նա պատրաստել էր հասարակաց և առանձին սենեակ, այնպէս էլ նա իր արտաքինը յարմարեցրել էր աշխարհային նպատակների, այսինչ իր ներքինը նուիրուած էր իրան և իր վայելքներին ու զուարճութիւններին:

Գլ. ծգ.

Մոլլա Նադանը նկարագրում է իր նոր ծրագիրը փող դիզելու եւ մարդկանց հրջանկացնելու համար:

Երբ մենք մնացինք մենակ (կրօնաւորը շուտով գուրս գնաց սենեակից), մոլլա Նադանը հանելով իր ծոցից մուշտահիդի տոմսը՝ ասաց, որ ինքը շատ ուրախ կը լինէր ընդունել ինձ իր ծառայութեան մէջ, քանի որ ես այդպէս լաւ յանձնարարութիւն ունէի: Նա զանազան հարցերով ուզեց իմանալ թէ ես ինչ յատկութիւնների տէր մարդ էի, և ես այնպէս պատասխաններ տուի նրան, որ նա յայտնեց իր կատարեալ բաւականութիւնը:

— Երկմբ ժամանակից ի վեր, ասաց նա, ես որոնել եմ քո բնավորութեան տէր մի մարդ, սակայն առանց աշխդութեան մինչև այսօր: Այն կրօնաւորը որ այս սենեակումս էր և քիչ առաջ գուրս գնաց, իմ օգնականն է եղել զանազան գործերի մէջ. բայց նա այնքան նաւիաք (պիղծ, խարդախ) է, որ այլևս իմ նպատակին չէ կարող ծառայել: Ես ուզում եմ այնպիսի մէկը՝ որ հաւատարիմ լինի և իմ շահերը իր շահերը համարի, որ մի կտոր հաց ուտի հետո ու բաւականանայ և չվերցնի աւելի մեծ բաժին, քան այն՝ ինչ որ իր իրաւունքն է:

Ի պատասխան նրան ես ասացի, որ թէպէտ աշխարհում շատ բաներ էի տեսել, այնուամենայնիւ, յանձին իմ, նա կ'ունենար մի հաւատարիմ ծառայ, որը ամենայն յօժարութեամբ կը հետևէր իր սկզբունքներին, որովհետև ես, ինչպէս ասել էի մուշտահիդին, վճռել էի մի նոր կեանք վարել և աշխատել՝ նրա հրահանգներին հետևելով՝ մի ճշմարիտ մուսուլմանի հայելի դառնալ:

— Այդ մասին, ասաց մոլլա Նադանը, դու քեզ ամենաբախտաւոր մարդը համարիր, որովհետև մարդիկ ինձ ընդունում են որպէս օրինակ Մարգարէի հետևողների մէջ: Մի խօսքով ես կարող եմ կոչուել կենդանի դորան: Աղօթելով և բաղնիք գնալով ինչպէս ինձ պէս կանոնաւոր և ճշգրտապէս չէ՝ ինչպէս ինձ պէս խառնել չէ հրաժարում այն ամեն բանից, որ անմաքուր է համարում: Դու իմ հագին ոչ մետաքս կը տեսնես, ոչ էլ մատանիներ: Այս մայրաքաղաքում ինչպէս ինձ պէս ճշգրտութեամբ չէ կատարում լուացման արարողութիւնը: Ես ոչ ծխում եմ, ոչ խմում եմ մարդկանց առաջ, ոչ էլ խաղում եմ սաթրանջ, նարդ կամ թղթախաղ կամ որևէ ուրիշ խաղ, որ,

ինչպէս օրէնքն ասում է, մոլորեցնում է միտքը և շեղում է նրան սուրբ մտածութիւններից: Ես ծոմ պահողների օրինակն եմ համարում և բամազան ամսին ամենևին ճանապարհ չեմ տալիս այն բաղմամբիւ քաղցած մարդկանց, որոնք զանազան պատրուակներով գալիս են մօտս խնդրելու ինձնից որ ներումն շնորհեմ իրանց՝ օրէնքի խտուրթիւնը պահել չկարողանալու համար: «Ո՛հ, ասում եմ նրանց.— աւելի լաւ է որ մեռնէք քան ուտէք, խմէք կամ ծխէք: Ի՞նչ հետեցէք. ես իմ գոյութիւնը կարող եմ պահպանել ջովայից մինչև ջովա (ուրբաթից մինչև ուրբաթ) առանց պղծելու շրթունքներս մի ուտելիքով կամ խմելիքով՝ որ հակառակ է մեր կրօնին, և ամենևին չեմ թուլացնիլ կամ զանցառութեան տալ մեր սուրբ օրէնքի ամենափոքրիկ կէտը»:

Այսպէս խիստ նուիրուած լինելով մեր կրօնին, շարունակեց նա, ես միշտ հրաժարուել իմ ամուսնանալուց, այնպէս որ այդ մասին մեր սուրբ Մարգարէի կատարելութիւնիցն էլ անցած կարող եմ համարուել: Նա (օրհնեալ լինի նրա մօրութեմը) ունէր կանայք ու ստրկուհիներ թուով աւելի շատ քան ունէր Սոլէյման էրնէ Դաւուդը. բայց թէպէտ ես ինքս չեմ ամուսնանում, ուրիշներին օգնում եմ ամուսնանալ, և իմ գործերի հէնց այդ մասնաւոր ճիւղի համար է, որ ես մտադիր եմ առանձնապէս վարձելու քեզ:

— Աչքիս վրայ, ասացի ես. պատրաստ եմ, դուք միայն պիտի հրամայէք ինձ:

— Ուրեմն պիտի իմանաս, ասաց նա, որ, յեղծումն և յանպատուութիւն մեր կրօնի և օրէնքի, ըովլիւնների (պոռնիկների) վաճառականութիւնը այնքան առաջ է գնացել այս քաղաքում, որ կին ամուսինները այժմ բոլորովին անպէտք բաներ են համարուած: Մարդկանց տները քանդուել են և մեծ Մարգարէի սահմանած օրէնքները անարգուել: Շահը, որ մթ բարեպաշտ իշխան է, յարգում է Օլէյմաներին և սուրբ է համարում ամուսնութեան արարողութիւնը, բողոքեց «օրէնքի գլխին» — մոլլա-բաշուն, բարոյականութեան այս եղծման, կործանման դէմ և յանդիմանելով նրան իր անհոգութեան համար՝ հրամայեց մի ճար, մի հնար գտնիլ այդ չարիքի առաջն առնելու: Մոլլա-բաշին (խօսքը մեր մէջ մնայ) մի աւանակ է. իր պարտականութիւնների և կրօնի մասին նա այնքան բան գիտէ, ինչքան գիտէ Ֆրանգստանի և նրա թագաւորների մասին. բայց ես, այո, ես՝ ո՞ր մոլլա Նադանն եմ, առաջարկեցի մի հնարք, որով ժողովուրդի յարմարութիւնները և օրէնքը կըցւում, կապւում են իրար հետ, առանց միմեանց արգելք դառ-

նալու: Դու գիտես որ օրէնքը թոյլ է տալիս մեզ ամուսնանալ ինչքան կարճ կամ երկար ժամանակուայ համար որ ուզենք, և այդ դէպքում, այսինքն երբ մարդ ժամանակաւորապէս է ամուսնանում, կինը մոթի (ստրուկ) է կոչուում:

Շինչիւ ուրեմն, շարունակեց նա, ասացի ես մոլլա-բաշուն, մենք կանանց պաշար չունենք այնպիսի տղամարդկանց համար, որոնք ժամանակաւորապէս ընկեր են որոնում: Գործը հեշտութեամբ կարելի է կարգադրել, և դա Նադանի գործն է»: Մոլլա-բաշին, որ ապուշների գլխաւորն է, բայց միևնոյն ժամանակ շատ խորամանկ իրան շահ խոստացող դէպքերում, իսկոյն ըմբռնեց միտքս: Նա կարողացաւ նախատեսել որ իրան համար եկամուտի մի մեծ հունձ կար, և հետևապէս գնեց մի քանի փոքրիկ տներ, որոնց մէջ նա պահում էր որոշ թուով կանայք, որոնք նրա միջոցով ամուսնանում են որպէս մոթիներ այն մարդկանց հետ՝ որ ցանկանում են ժամանակաւորապէս ամուսնանալ: և քանի որ երկու կողմից էլ—թէ մարդու և թէ կնոջ—նրան վճար են տալիս, նա այժմ բաւական շատ եկամուտներ ունի: Մարդիկ սկսել են այնքան կարօտով ամուսնանալ, որ նա պարտաւորուել է մի քանի մոլլաներ վարձել մենակ նրանց ամուսնութեան արարողութիւնը կատարելու համար: Իր եկամուտներից նա ոչինչ չէ տալիս ինձ, ինձ՝ որ առաջարկեցի այդ միջոցը: Ուստի ես վճել եմ այդ գործն ինքս անել և դրանով նպաստել ժողովրդի յարմարութիւններին. բայց այս բանը պիտի ծածուկ մնայ, խիստ ծածուկ, որովհետեւ եթէ մոլլա-բաշին իմանայ, մէջ կ'ընկնի և իր իշխանութեամբ կը խափանի, գուցէ ինձ էլ արտաքսել կը տայ այս քաղաքից:

Մինչ մոլլա Նադանը խօսում էր իր ծրագրի մասին, ես գնում էի նրան գլխից մինչև ոտները, և մտածում էի թէ արդեօք հէնց նա էր այն մեծահամբաւ «օրէնքի սիւնը», որի մասին Ղուամի մուշտահիդը այնքան գովասանքներով էր խօսել հետո: Ինչևէ, սուրբ կեանքի մէջ դեռ շատ մանուկ լինելով՝ ես թոյլ չտուի ինձ իմ կարծիքը յայտնել ընդդէմ նրա ծրագրի յարմարութեանը և գործադրութեանը, ակամայից շարունակեցի հաւանութիւն արտայայտել:

«Ես, շարունակեց նա, արդէն հրեք կ'ին եմ պահում այս մօտերքում գտնուող մի փոքրիկ տնում: Իմ դիտաւորութիւնն է քեզ վարձել նրա համար որ դու ամուսիններ որոնես նրանց համար: Դու պիտի յաճախես քարվանսարաները և վաճառականներին կամ օտարականներին առաջարկես ու համոզես որ ամուսնանան, իհարկէ, աւելի մատչելի պայմաններով՝ քան

մոլլա-բաշունը: Փհսացուներից դու վճարներ կ'առնես, բայց
 ոչ աւելի քան վեր է նրանց նիւթական կարողութիւնից: Ես
 քեզ վարձ չեմ տալ, որովհետեւ դու միջոց կ'ունենաս այն-
 պիսի դիտութիւն սովորել ինձանից, որը ժամանակով քեզ
 մոլլա կը դարձնի, և դու առիթ կ'ունենաս բոլոր ճշմարիտ
 հաւատացեալներին ցոյց տալ ուղիղ ճանապարհը՝ կատարելու
 իրանց պարտականութիւնները: Անշուշտ իմ տնում քեզ ամեն
 բան կը տրուի, և երբեմն էլ պատեհութիւն կ'ունենաս մի բան
 էլ հաւատարմութեամբ գրպանդ դրել: Երբ բարեկամներս կը
 գան ինձ այցելելու կամ ինձ հետ ընթրելու, դու պիտի նրանց
 առաջ քեզ ձևացնես որպէս թէ իմ ծառան ես. բայց ուրիշ ժա-
 մանակներում կարող կը լինես մօտս նստել և վարուել որպէս
 գրագիր»:

Մոլլա Նադանն այստեղ վերջացրեց իր խօսքը: Նա յոյս
 ունէր ինձնից մի պատասխան լսելու, սակայն նրա՝ իմ առջև բաց
 արած գործի լայն ասպարէզը այնքան շշկլացրեց ինձ որ մի քանի
 րոպէից յետոյ ես հաղիւ ինձ եկայ: Ես որ յուսացել էի մենա-
 կեացի կեանք վարել, ամբողջ օրը մի անկիւնում նստել ու դո-
 ւան կարդալ կամ աղօթք անել, մտորասաներում (դպրոցնե-
 րում) դասախօսութիւններ լսել, մղկիթներում քարոզներ լսել—
 այո՛, ես որ յուսացել էի յանձին իմ աղայի—մոլլա Նադանի
 գտնել մէկը, որ իսպառ հրաժարուած է աշխարհային վայելք-
 ներից և միմիայն տենչում է արժանանալու հանդերձեալ աշ-
 խարհին, յանկարծ կոչուեցի աւելի խորը մտնելու կեանքի և
 գործի մէջ, և հետեւելու այնպիսի մի մարդու քայլերին, որը կ'ստես
 թէ ապրում էր միայն և միայն փող ու անուն վաստակելու
 նպատակով ու տենչով: «Է՛, կը փորձեմ, կը տեսնեմ», մտա-
 ծեցի ես: Իմ հանգամանքները այնքան յուսահատական էին, որ ես
 չէի կարող մերժել նրա առաջարկը, և դէ, բոլորից յետոյ, լի-
 նել մայրաքաղաքում ապրող մեծահոգակ մարդկանց մէկի ա-
 շակերտը, մի վիճակ, մի դրութիւն էր՝ որ արհամարհել չէր
 կարելի. ուստի ես համաձայնութիւն յայտնեցի և մտալ մոլլա
 Նադանի ծառայութեան մէջ:

Նա յետոյ ինձ ասաց, որ դեռ ինձ հետ խօսելու շատ
 բան ունէր որ այժմ չէր կարելի շարունակել, որովհետեւ պիտի
 գնար «օրէնքի պետի» մօտ. բայց դնալուց առաջ ասաց որ,
 որովհետեւ ինքը բոլորովին հրաժարուած էր աշխարհային
 պատուից ու փառքից, նա չէր պահում շատ ծառաներ, այլ
 բաւականանում էր մի-երկուսով, որոնց ծառայութիւնը ան-
 հրաժեշտ էր իրան: Նա պահում էր մի խոհարար և մի մարդ
 էլ, որ ծառայում էր թէ որպէս աւագ ծառայ, թէ որպէս

վալէտ, և թէ որպէս մէյլծարո՛ւ նա պահում էր միայն մէկ էջ։
— Բաւական նեղութիւն կրելուց յետոյ, ասաց նա, ես կա-
րողացել եմ մի սպիտակ էջ գնել, որը ինչպէս գիտես, մի կենդա-
նի է, որ պատիւ է բերում հեծնողին. բայց, իհարկէ, երբ գործս
ընդարձակուի և պատիւս բարձրանայ, մի ջորի պիտի գնեմ։

Օգտուելով առթից՝ ես նրան յայտնեցի որ ես մի լաւ
ջորի ունէի, որին կարող էի ծախել։ Քիչ խօսելուց յետոյ վեր-
ջապէս վճռուեց որ նա թէ՛ ջորի պահէր և թէ՛ էջ—առաջինը
իբրան համար՝ որպէս աստիճանաւորի, իսկ վերջինը ինձ հա-
մար՝ որպէս մի խոնարհ ծառայի։

Գլ. ծղ.

Հոգի Բարան որպէս խնամախօս։ Նրա արձանագրութեան մատենանը։

Նախ քան կատարելապէս ըմռնելու իմ պաշտօնի վերա-
բերելի բոլոր պարտականութիւնները, մոլլա Նադանը խըն-
դրեց ինձնից տեսակցութիւն ունենալ իր երեք մոթիների
հետ, որպէսզի նրանցից տեղեկութիւններ ստանալով՝ մի մա-
տեանի մէջ արձանագրէի նրանց տարիքը, տեսքը, գեղեցկու-
թիւնները և այդ մատեանը միշտ հետս պահէի ցոյց տալու
ինձ հանդիպող օտարականներին։

Ամենից առաջ գնացի բազարը և գնեցի մի մոլլայի վե-
րարկու և մի բաճկոնակ, որ կոճակուում էր վրի մօտից մինչև
գօտատեղին, նաև մի երկար կտոր սպիտակ մարմաշ գլխիս
փաթաթելու համար։ Ձգեստաւորուելով իմ նոր բնաւորութեա-
նը համապատասխանող հանդերձով՝ ես գնացի երեք մոթինե-
րի տունը, ուր ինձ ազատ մուտք շնորհուեց, որովհետև նրանց
նախապէս իմաց էր տրուել իմ այցելութեան մասին։ Երեքն
էլ նստած էին մի խղճուկ, ողորմելի սենեակում և ծխում էին։
Նրանց գլուխները անհոգութեամբ ծածկուած էին քօղով, բայց
իմ ներս մտնելուն պէս, նրանք, ըստ սովորութեան, իսկոյն ծած-
կեցին իրանց երեսները, բաց թողնելով միայն իրանց մէկ աչքը։

— Սէլամն ալլայիդ (խաղաղութիւն ընդ ձեզ), ասացի
ես. ես եկել եմ մոլլա Նադանի կողմից մատուցանելու ձեզ իմ
խոնարհ ծառայութիւնները. թերևս դուք գիտէք իմ միւս նը-
պատակը, և յոյս ունիմ որ առանց ներհակութեան յետ կը քա-
շէք ձեր քօղերը։

— խաղաղութեամբ ապրի՛ք, մոլլա, ասացին նրանք, և ա-
պա շատ շողորորթական խօսքերով ինձ հասկացրին, որ իրանք

շատ ուրախ էին, որ ես այցելել էի իրանց, և յոյս ունէին, որ իմ ներկայութիւնը բարեբախտութեան կ'արժանացնէր իրանց:

Նրանցից երկուսն անմիջապէս յետ քաշեցին իրանց քողերը, և ես տեսայ երեսներ՝ որոնք վաղուց «մնաք բարով» էին ասել շուշանին ու վարդին: Թէպէտ նրանք շատ վարպետութեամբ ծարիրել էին իրանց արտեանունքները, կապոյտ աստղ-դերով զարդարել էին իրանց կզակներն ու ճակատները և վարդագոյն ներկով գեղեցկացրել էին իրանց թշերը, այնուամենայնիւ ես պարզ կերպով կարողացայ բաղմաթիւ կընճիւներ նկատել նրանց երեսների վրայ:

Երրորդ կինը զգուշութեամբ շարունակեց ծածկուած պահել իր երեսը:

Երբ յիշածս երկու դիւթիչները յետ քաշեցին իրանց քողերը և սկսեցին անոյշ ու հրապուրիչ ժպիտներով նայել երեսիս, ես խփոյն սկսեցի հիացում ու զարմանք արտայայտող բացազանչութիւններ անել:

— Մաշալան, մաշալան, ասացի ես. ես կ'անգնած եմ մի տեսարանի առաջ՝ որին արժանի է միայն Ֆարհադը: Աղաչում եմ, շատ մի՛ նայէք ինձ, որովհետեւ ես կը խորովուեմ, կ'այրուեմ: Ի՛նչ գեղեցիկ աչքեր, ի՛նչ ըթեր, ի՛նչ շրթունքներ եմ տեսնում: Խղճացէ՛ք ինձ և այլևս մի՛ նայէք ինձ. բայց ինչո՞ւ, հարցրի ես զարմանալով, ինչո՞ւ այս խանումը (մատնացոյց անելով երրորդին, որի երեսը դեռ ծածկուած էր) ինձ այսքան երկար երկրպագութեան մէջ է պահում: Գուցէ նա ինձ բոլորովին անարժան է համարում տեսնելու իր երեսը և սքանչանալու իր գեղեցկութեան վրայ: Եթէ այդպէս է, նա իրաւունք ունի, որովհետեւ ես միայն մի խեղճ, աղքատ մուլա եմ, մինչդեռ անկասկած արեգակն էլ իր բոլոր վեհափառութեամբ անարժան է այդպիսի մի բարձր շնորհի և արտօնութեան:

— Ինչո՞ւ ես այդքան նաղութուղ անեմ, ասացին նրա ընկերները. գիտե՞ս, այս մարդը պիտի կարողանայ մեր մասին նկարագրութիւններ անել, եթէ ոչ, անամուսին կեանքով կը տանջուենք և կին սեռի մէջ ծաղրի, ծանակի ու անարգանքի առարկաներ կը դառնանք:

— Թող այդպէս լինի, կատուն վերմակի տակից պիտի գայ, ասաց նա, և երբ բաւական նաղ անելուց յետոյ իր քողը յետ քաշեց, ո՞վ զարմանք, ո՞վ էր նա— իմ առաջին աղայի՝ Շահի հաքիմ բաշու խանումն էր նա:

— Յանուն օրհնեալ Մարգարէի, յանուն ամեն բանի որ սուրբ է, գոչեցի ես, ասացէ՛ք, այս ի՛նչ եմ տեսնում: Արդեօք ջինսերն են ձեզ այս վիճակին հասցրել:

— Բնիկ, Հնիկ Բարա, ասաց նա անվրդով. ճակատագիրը

զարմանալի բան է. բայց ասա, հնչի, լո՛ւ ի՞նչպէս մոլլա դարձար, դու՛ որ սպանեցիր ամուսնուս:

— Միթէ՛ ձեր ամուսինը մեռած է, զարմացայ ես. ինչո՞ւ էք այդպէս անդգուշութեամբ արտասանում այդ բառերը: Ախր ես ի՞նչ գործ եմ ունեցել ձեր ամուսնու մահուան հետ: Ճշմարիտ է, նա մի ժամանակ իմ աղան էր, և ես այժմ շատ ցաւում եմ նրա մահուան համար, բայց ես ի՞նչ յանցանք ունիմ: Ուրեմն դուք էարող էք ասել թէ՛ ն'ս էի որ սպանեցի, մարտիրոսացրի Հոսէինին (օրհնեալ լինի նրա յիշատակը), ինչպէս ասում էք որ իբր թէ ես եմ սպանել ձեր ամուսնուն: Ասացէ՛ք ինձ, ի՞նչ է պատահել, ի՞նչպէս մեռաւ հաքիմ բաշին. ես տարակուսանքի մէջ եմ, տգիտութեան լարիւրինթոսի մէջ եմ, ո՛չինչ չեմ հասկանում:

— Դու ինչո՞ւ ես կեղծում, իբր թէ ոչինչ բանից լուր չունիս, ասաց նա իր սովորական ճիշով: Քո պատճառով Շահը Զինաբին արտաքսեց այս աշխարհից. Զինաբի մահուան պատճառով հաքիմ բաշու մօրուքը փետուեց, նա խայտառակուեց, և խայտառակուելուց էլ մեռաւ. ուրեմն տեսնո՞ւմ ես որ բոլոր չարիքի պատճառը դու ես եղել:

— Վայ, այդ ի՞նչ մոխիր էք թափում գլխիս, խննում, բացազանչեցի ես: Ախր ինչո՞ւ պիտի ն'ս համարուեմ ձեր ամուսնու մահուան պատճառը, քանի որ նրա մեռնելու ժամանակ՝ ես 100 փարսաղ հեռու էի նրանից: Այդ ի՞նչ փաստեր են. ասացէ՛ք խնդրեմ, եթէ ձեր ամուսինն անչափ փլաւ ուտելուց հիւանդանար ու մեռնէր, ուրեմն դուք պիտի ասէի՞ք որ բրինձ ցանո՞ղն է նրան մահ պատճառել: Դուք այդպէս կ'ասէի՞ք, բայց դա հօ ճշմարտութիւն չէր լինի:

Մենք մի քիչ ժամանակ շարունակեցինք վիճաբանել. բայց նրա ընկերուհիները վախելով որ մի գուցէ մեր վիճաբանութիւնը մնասէր իրանց շահերին, միջամտեցին և ինձ յիշեցրին որ մենք գործ ունէինք վերջացնելու, որովհետեւ ներանք անձկակարօտ էին որ իրանց հրապոյրները այլևս արհամարուած ու անպտուղ չմնային: Սնանում էլ որ խօսում էր միայն խօսելու համար և որը, ինչպէս ես գիտէի, սովորականից աւելի սաստիկ ատելութիւն էր սնուցել իր սրտում դէպի իր հանգուցեալ ամուսինը, կարծես շատ էր ցանկանում որ ես մոռացութեան տայի իր նախկին փառաւոր վիճակը, որովհետեւ նա էլ խնդրեց ինձանից զբաղուել մեր գործով:

Նս սկսեցի նրանից, իբր թէ իրան աւելի էի յարգում, և խնդրեցի նրանից պատմել ինձ իր պատմութեան միջանի մասնաւոր անցքերը, որպէսզի նրա համար ամուսնացու գտնելիս՝

կարողանայի, ըստ կարելոյն, լաւ գոյներով նկարագրել իրան:

— Դու գիտես, ասաց նա, որ մի ժամանակ ես անուշու-
թիւնների դրախտում վայելում էի վարդի՝ այսինքն արքայից
արքայի սէրն ու շնորհը, որ ես առաջին գեղեցկուհին էի նրա
հարկում և ա՜ն ու սարսափ էի պատճառում իմ հակառակորդ-
ներին. բայց մի, ով է կարողացել դէմ կենալ ճակատագրի
վճռին, եկաւ մի նոր կին, որն օժտուած էր աւելի զօրաւոր
հրապոյրներով ու գիւթանքներով քան ես, և որը զրաւեց Շա-
հին, խորտակեց զօրութիւնս և տապալեց ինձ: Նա այնքան
վախենում էր իմ գիւթանքներից, որ չէր կարողանում հան-
գատանալ մինչև որ ինձ արտաքսել տուեց, և յետոյ, ես այն-
քան զժրախտ էի, որ Շահը ինձ փեշքաշ արեց իր հաքիմ բա-
շուն: Ա՛խ, ես երբէք չե՞մ կարող մոռանալ այն մտատանջու-
թիւնն ու խորին վիշտը որ ես կրեցի, երբ ինձ զրկելով ար-
քունիքի փառքից ու վայելքներից, ձգեցին հաքիմ բաշու բա-
ղունների վրայ, ապրելու գեղերի և գեղշիշերի՝ մէջ: Ես չեմ
ցանկանում կրկնել Զինաբի բոլոր պատմութիւնը. միայն այս-
քանը պիտի ասեմ, որ երբ հաքիմ բաշին մեռաւ, ես կրկին
փորձ արի գրաւել Շահի սիրտը. սակայն նա ուշադրութիւն
չդարձրեց վրաս, և ես կամաց-կամաց թշուառացայ, ես՝ որ մի
ժամանակ կարող էի Ալլահի փոխանորդի մօրուքից բռնած՝
պտոյտ տալ նրան, ես՝ որ կարող էի նրան կատարել տալ բո-
լոր իմ ցանկութիւնները, այժմ, աւաղ, այժմ հասել եմ ստոր-
նութեան այն աստիճանին, որ պարտաւորում եմ ամուսնա-
նալ որպէս մոթի՝ որեւէ մի փողոցային մարդի հետ:

Նա սկսեց լալ ու ողբալ իր եղկելի գրութիւնը, սակայն
եւ նրան մի քիչ սփոփեցի հաւաստիացնելով, որ ես ամեն
ջանք դրած կը դնէի մի յարմար ամուսնացու ճարել իրան հա-
մար:

— Դու տեսնում ես, ասաց նա, որ ես գեռ գեղեցիկ եմ,
և երիտասարդական արիւնս գեռ վառ է երակներումս: Նայի՛ր
աչքերիս, տես, նրանք զրկուել են իրանց պայծառութիւնից:
Հիացի՛ր յօնքերիս վրայ, որտեղից ես կարող տեսնել մի զոյգ
յօնքեր, որ իմիս պէս լաւ միացած լինին. բացի դրանից, նա-
յի՛ր մէջքիս, տես, եթէ չափես՝ մէկ թիղ չի լինի:

Նա միառմի թուեց իր ամենափոքրիկ կատարելու-
թիւնները, որոնց վրայ ես, ըստ իր ցանկութեան, նայում էի
հիացմամբ, բայց երիտասարդութեան և գեղեցկութեան փո-
խարէն ես յանձին նրա գտայ միմիայն մի գեր, պառաւած,
ուռած կին, որից իմ բուռն ցանկութիւնն էր վրէժ հանել

այն անիրաւութեան, այն բարբարոսութեան համար, որով նա տանջել, չարչարել էր խեղճ Ջինարին:

Վերջապէս միւս երկուսն էլ համառօտ կերպով նկարագրեցին իրանց կեանքերը: Մէկը մի ոսկերիչի կին էր եղել. նրա ամուսնուն սպանել էին, որովհետեւ նա գողացել էր այն ոսկու մի մասը, որ թագաւորը տուել էր նրան մի գոյգ մոմակալներ շինելու: Միւսն էլ ինքնապաշտպանութեան համար էր մոթի դարձել, որովհետեւ նրա ամուսինը մի յանցանք էր գործել և Շահի բարկութիւնից ազատուելու համար փախել, գնացել, ապաստանուել էր ուսաների մէջ: Այդ երկուսն էլ շատ աշխատեցին համոզել ինձ, որ իբր թէ իրանք դեռ ջահել ու գեղեցիկ էին: Սրանց սրտները չկտրելու համար ես երկրորդեցի նրանց ասածները և խոստացայ ամեն ջանք դորձ դնել ներանց շահերի համար:

— Յիշիր, ասաց մէկը, որ ես միայն 18 տարեկան եմ:

— Զմոռանաս, ասաց միւսը, որ ես դեռ երեխայ եմ:

— Միշտ յիշիր իմ միացած յօնքերը, ճշաց հաքիմ բաշուայրին:

— Բէ չաշմամ (աչքիս վրայ), ասացի ես, և հեռանալով՝ սկսեցի անէծքներ կարգաւ ու ծիծաղել այդ նողկալի արարածների վրայ:

ԳԼ ԾԵ.

Այն մարդու մասին՝ որին Հաջի Բարան մնում է կարծում, բայց հաճողպում է, եւ այն ամուսնութեան մասին, որ նա յաջողացնում է:

Գործիս այս մասը վերջացնելով՝ ես քայլեցի դէպի քաղաքի ամենաշատ յաճախորդ ունեցող քարվանսրան փեսացուներ ճարելու աղայիս մոթիների համար: Քարվանսրան դեռ չհասած՝ ես տեսայ, որ բոլոր ծառուղիները լի էին բարձուած ջորիներով, ուղտերով և ճանապարհորդներով: Վերջիններից մի քանիսի գլուխները ծածկուած էին սպիտակ փաթոյթներով, որ նշանակում էր թէ նրանք ուխտաւորներ էին որ գնացել էին այցելելու Իմամ Րիզայի գերեզմանը՝ Մէշհէդում: Նրանք ինձ յայտնեցին, որ կարաւանը եկել էր Պորասանից: Ես սպասեցի մինչև կարաւանը կամաց-կամաց քաշուէր փողոցներից: Բաւական վիճաբանութիւններից և հայհոյանքներից յետոյ, որ տեղի ունեցաւ ջորեպանների և ուղտապանների մէջ, կարաւանը իջաւ քարվանսրայում: